

ԱԼ. ՄԱՐԶԱՆ ՅԱՆ
(Ինժեներ-մեխանիկ)

ԲԱՐԲԻՏՈՆԵՐ
ՅԵՎ ՆՐԱՆՑ
ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

66
Մ-37

ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1937

26.343

26 JUN 2013

24 SEP 2016

ԱՐ

66
5-37

Ա. ՄԱՐԶԱՆՅԱՆ
(Ինժեներ-մեխանիկ)

ԲԱՐԲԻՏՈՆԵՐ
ՅԵՎ ՆՐԱՆՑ
ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

1000-1074
42/13



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՈՒՅՔՆԵՐՆԵՐ—ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ—1937

Պատ. իմրադիք՝ Ն. ԽԱՆՉԵՂԱՆ
Տեղ. իմրադիք՝ Ծ. ՃԻՆԻԲԱԼԱԶԱՆ
Մըրուղքէ՝ Ո. ՀԱԿՈՐՑԱՆ

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Դ Լ Ա Վ Լ Ի Ա Խ 202
Հրատարակչ. № 3599
Տ ի բ ա ժ 1 0 0 0
Գ ո ւ զ ե թ 5 6 3

Մեր այս աշխատության նպատակն է—

1. Մանոթացնել ավտո-տրակտորային վերանորոգման արհետանոցներում, ՄՅԿ-ներում և խորհունտեսություններում աշխատաղ մեխանիկներին, արհետանոցի զեկավարին, փականագործներին, թիթեղագործներին, բարբիտը լցնողներին, խառատներին, արհետանոցային ու դաշտային բրիզագիրներին, շոփերներին և առաջին կարգի տրակտորաներին բարբիտաների տեսակներին, նրանց առանձնահատկություններին և նրանցով պահանջներ ու առանցքակալներ լցնելուն, բարբիտով լցված պահանջների և առանցքակալների մեխանիկական մշակմանը, ավտոմոբիլի ու տրակտորի վերանորոգման ժամանակ մօնառք անելուն և նրանց ռացիոնալ շահագործմանը:

2. Մանոթացնել գիտահետազոտական աշխատանքների հետ կողման նոր տեսակի բարբիտների կիրառմանը և ինչպես նոր, այնպես ել գործածվող բարբիտների ռացիոնալ շահագործմանը: Յեզ այդ համարվություն կտա խնայելու անազի ծախսումը, բարելավելու ավտոմատային բարիչների ռացիոնալ համարմանը պայմանները, իսկ այդ բոլորի հետևանքը կինի այն, վոր մեր յերկիրը կկարողանա խռոց շափակ կրնատել քանի անազի ներմուծումն արտասահմանից.

Հեղինակին հայտնի յեն գեղքեր, յերբ տրակտորների պարագութները հասել են 50—75%-ի հատկապես բարբիտը սխալ լցնելու, նրանով լցված առանցքակալները մեխանիկական վոչ ճիշտ մշակման յենթարկելու և այդ առանցքակալների վոչ իռացիոնալ շահագործման պատճենով:

Մեզ մոտ ավտո-տրակտորային վերանորոգման արհետանոցներում, վոչ բոլոր զեղքերում են հարկ յեղած ուշադրություն գարձնում բարբիտային տնտեսության վրա, և շատ հաճախ բարբիտը լցնելու և մշա-

Հանձնված է արտագրության նոյեմբերի 1-ին 1936 թ. Սառբագրված և սպառագրության նունվարի 25-ին 1937 թ. Սատաֆորմատ Ա-5.

Տիպография армянского из-ва „ГРО“, Ростов-Дон, Ворошиловский пр., 27

կելու ցեխը տեղափորում են պղնձագործական ցեխի կամ դարբնոցի անկյունում, և հաճախ այդ անկյուններն անդամ ապահովված չեն մինիմալ անրաժեշտ սարքավորումով:

Այս գրքումկը կազմված է Մոսկվայի Գունավոր մետաղների համառիութենական մեխանիզացիայի ինստիտուտներում (1933 և 1934 թվերին) հեղինակի կողմից կատարված հետազոտությունների հիման վրա:

Խճեներ-մեխանիկ Ա. ՄՈՐՉԱՆՅԱՆ

ԲԱԲԻՏՆԵՐ

Մեխանիզմները հայտաբերվելուն զուգընթաց՝ առանցքակալների անհրաժեշտությունն ել զգալի դարձավ: Առանցքակալների միջոցով իրար հետ միանում են մեքենաների հետ շարժվող մասերը: Առաջին, փայտե առանցքակալներից հետո յերեան յեկան մետաղից, յերկաթից, չուգունից կամ բրոնզից պատրաստված առանցքակալները: Պղնձի և անագի խառնուրդով պատրաստված առանցքակալները լայն չափով տարածվեցին և ներկայում ել գործադրության մեջ են:

Ավելի ուշ, տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, ակնհայտ դարձան մետաղե առանցքակալների առավելությունները, բայց նրանց դիմացկունությունն ու յերկարատևությունն անբավար գալիք եցին:

Մեքենաների աճող հզորությունն՝ առանցքակալների նկատմամբ բարձր պահանջներ առաջազրեց: Աճում եր առանցքի պտույտների քանակը, առանցքակալի վրա ազդող ահսակարար ճնշումը: Շուտով պարզվեց, զոր գործադրվող հալոցների սաստիկ կարծրության հետեւանքով առանցքակալների շփումը չափից ավելի յե, և պղնձառե առանցքն արագ և մաշվում:

Հարյուր տարի առաջ ֆրանսացի Բաբբրիտի կողմից առաջարկ յեղավ բրոնզե պահանդի ներսի առանցքի հետ անմիջապես շփվող մասը լցնել անտիֆրիկցիոն հալվացքով, բաղկացած 83 % անագից, 12 % սուրճայից (ծարրաքարից) և 5 % պղնձից:

Այսպիսի մի հալվածքը չեղոքացնում եր առանցքակալների մաշումն ու սաստիկ շփումը: Այս հալվածքը լայն չափերով տարածվելու հետեւանքով ինդիք առաջացավ հալվածքի արժեքն եժանացներ, անազը—սրան իր հատկություններով մոտիկ—կապարով փոխարինել. կապարը, ինչպես և անազը, հալվում և գոչ շատ բարձր ջերմության մեջ և նույնական փափուկ եւ:

Այսդիտով յիշևան յիշան մեծ քանակությամբ կապարի և անտառի խառնուրդով բարբիտներ, վորոնք տարբեր քանակությամբ կապար, անագ, սուրմա և պղինձ են պարունակում իրենց մեջ:

Այս հալվածքները գործադրվում եյին ամեն դեպքում, յերբ բարբիտներ պահանջվում, հաշվի չառնելով հալվածքի հատկությունները և առանցքակալների աշխատանքի գժվարությունները:

Այսպես յերկաթուղիներում գործադրվում եյին հալվածքներ՝ հետեւյալ բաղադրությամբ:

Անտառի % -ը	Սուրմայի % -ը	Պղինձի % -ը	Կապարի % -ը
0-89	7-20	0-10	0-80

այսինքն ամեն տեսակի բաղադրություններ, և սրանց շարքում արագընթաց շողեքարշերում կարելի յնը տեսնել հալվածքներ՝ անտառի 20%, սուրմայի 16%, պղինձի 5% և կապարի 59% բաղադրությամբ, իսկ ազգանքատար վագոնների առանցքակալների բաղադրությունները հաճախ լինում եյին—անագ՝ 48%, սուրմա՝ 14%, պղինձ՝ 2%, կապար՝ 36%:

Այսպես եր գործյունը մինչև 1918 թ., յերբ առաջին անգամ ԽՍՀՄ-ում հրապարակվեց պրոֆեսոր Բոչվարի աշխատությունը:

Գրոֆեսոր Բոչվարն ուսումնասիրել եր անտիֆրիկցիոն նպատակներով գործադրվող կապար-սուրմա-անագային հալվածքները: Այդ աշխատանքի արդյունքները հիմք ծառայեցին Բարբիտի առաջին ստանդարտին (աղյուսակ № 1):

Այս ստանդարտը բաղկացած եր տարբեր բաղադրության հինգ մարկայի հալվածքներից, վորոնք առաջադրվեցին աշխատանքի տարբեր պայմանների համար:

Բարբիտների առաջին ստանդարտ

Աղյուսակ № 1

Բարբիտի մարկան	Բարբիտի բաղադրությունը առկառներով				
	Անագ	Սուրմա	Պղինձ	Կապար	Տարբեր իրառությունների ընդհանուր բանակարգությունը
Բ-1	միացածը	11-12	5-6	—	0,5-ից պակաս
Բ-2	15-16	15-16	2,5-3	միացածը	0,5-ից >
Բ-3	12-13	13-15	2,5-3	>	0,5-ից >
Բ-4	4-5	13-15	2,5-3	>	0,5 ից >
Բ-5	—	16-18	1,2-1,7	>	0,5 ից >

Բ-1. Գործադրվում. Եավելի պատասխանատու դեպքերում, արագ պատվող առանցքներ ունեցող առանցքակալների համար յերբ բեռնվածությունը մեծ ե:

Բ-2. Արագ պատվող առանցքներ ունեցող առանցքակալների համար, յերբ բեռնվածությունը մեծ ե:

Բ-3. Միջին արագությամբ պատվող առանցքներ ունեցող առանցքակալների համար՝ միջին բեռնվածությամբ:

Բ-4. Նվազ արագությամբ պատվող առանցքներ ունեցող առանցքակալների համար՝ միջին բեռնվածությամբ:

Բ-5. Նվազ արագությամբ պատվող առանցքներ ունեցող առանցքակալների համար՝ նվազ բեռնվածությամբ:

Բ-6. Նվազ արագության առանցքակալների համար՝ փոքր բեռնվածությամբ:

Ընդհանուր մինչև 1931 թ. պատրաստում եյին բարբիտի մարկաներ միայն այդ ստանդարտով: 1931 թ. պրոֆեսոր Զայցեվս անտիֆրիկցիոն նոր հալվածք հայտնաբերեց և ստանդարտը փոփոխության յինթարկվեց (աղյուսակ № 2): Բարբիտի մի քանի մարկաներ, վորպես ցածրուակ և գործնականում քիչ գործադրելի, դուրս հանվեցն և փոխարինվեցին հատուկ բաղադրության նոր բարբիտով, վոր լարորատոր և արտադրական փորձարկումների ժամանակ լավ վորակ հայտնաբերեց — մինդեղակադիմիական բարբիտ: Բ-ՄԿ (նկ 7b)

Ստանդարտ բարբիտներ

Աղյուսակ № 2

Հալվածքի մարկան	Բիմիական բաղադրությունը տոկոսներով						Մեկ տոն նի արժե- քը՝ առկր- ներով
	Անագ	Սուրմա	Պղինձ	Սկզբանական պարագաների ընդհանուր բանակարգությունը	Կապարի ընդհանուր բանակարգությունը	Անագի ընդհանուր բանակարգությունը	
Բ-83	83	11	6	—	—	—	2600
Բ-ՄԿ	11-12	11-12	1,5-2,0	1,2-1,7	1,3-1,8	մաշտածը	1200
Բ-16	16	16	3	—	—	—	960
Բ-10	10	15	3	—	—	—	860
Բ-8	—	17	1,5	—	—	—	670

Այլ յերկրներում նույնական կան անտիֆրիկցիոն ձուլվածքների ստանդարտներ և նօրմեր, վարոնք պարունակում են իրենց մեջ տարբեր բանակարգ կապար, անագ, սուրմա և պղինձ: Վերջին տաս—տասնհինգ տարբերուամ, համաշխատիային տեխնիկական բնագավառում ակտել են յերեվակարգ կապար-անագային անտիֆրիկցիոն ձուլվածքներ՝ հատուկ բաղադրության: Բացի կապարից, անագից, սուրմայից և պղինձից, բարբիտները պարունակում են նաև նիկել, կաղմի, մինդեղ, յերկաթ ու նույնիսկ արծաթ և ուրիշ շատ մետաղներ:

Բաղադրությունների այս բազմատեսակությունը նոր հալվածքի պատահնաւությունը պատճենական վերցնելու ցանկությամբ և բացատրվում, սակայն մատնադանակությունը պատճենական վերցնելու ցանկությամբ:

նշված ժետաղներից շատերն ունեն իրոք խոշոր նշանակություն։ Մեր Միության մեջ կատարված հետազոտություններն ապացուցել են, վոր կապար-անագային բարբիտին կադմի և մլնդեղ ավելացնելն իսկապես խոշոր ազդեցություն ե ունենում հալվածքի հատկության վրա։

Նույնը պիտի ասել նաև նոր անտարքի կցիոն հալվածքի՝ դրաֆիտում առաջի մասին, վորը գրաֆիտ ե պարունակում։ Այս հալվածքը, վոր Քերմանիայում DKV մարկայի ավտոմոբիլների և այլ շարժիչների համար ե գործադրվում, բարձր աեսակի անտիֆրիկցիոն հատկություններ ունի և միզոնում նույնպես լայն չափերով կարող ե տարածվել, յերբ այդ հալվածքը, վորը ներկայում միայն արտասահմանյան պատճեն ունի, հնարավոր կլինի պատրաստել մեզ մոտ։

Այս հալվածքը, բացի բարբիտի ընդհանուր մետաղներից՝ սուրմայից, անագից, պղնձից և կաղարից, պարունակում և նաև գրաֆիտ, գորը հալվածքի մեջ գտնվում ե անխառն վիճակում։ Գրաֆիտին տառնձնապես գլուրությամբ ե կազմում յուղը։ Բացի այդ, նա ունի յուղը ծծելու առանձին հատկություն, վորը հնարավորություն ե տալիս նրան—յուղը պակաս մատակարարվելու գեղգում պահեստի յուղ ունենալու։

Պատերազմի ժամանակ Գերսանիայում, վորը պատերազմի պատճենով կտրված եր անագի շուկաներից և անագի սեփական ընավայրեր (հանգեր) չօւներ, ստեղծվեց մի տեսակ կաղարի բարբիտ, վորը կալցիի բարբիտ ե կոչվում։ Հետագայում այս տեսակի բաղադրությունների ձուլվածքները հետազոտվեցին և փորձի յենթարկվեցին նաև մեզում—ԽՍՀՄ ում, և վերջին տասը տարվա ընթացքում լայն գործադրություն ունեն մեր յերկաթուղիներում։

Կալցիի բարբիտը (Բ-НТԿ) 98,5%—ով կապարից և բաղադրված, բացի դրանից, նա ունի 0,8% կալցի, 0,7% նատրիոն և այլ հեշտությամբ թթվուացող մետաղներ։ Այս հալվածքը հիանալի բանում ե վագոն-բանից, նաև առանցքակալներում։ Ներկայում շողեքարշերն ել անցնում են այդ ների առանցքակալներում։ Ներկայում շողեքարշերն իր վատ կալչունության պատճառով հալվածքին։ Կալցիի բարբիտն իր վատ կալչունության թափում են (ձուլում) առանց անագելու (ոլուց), սակայն կաղնում ալիքանիկան ձևով—պահանգի մակերեսին սեղանածե փորակներ են մեխանիկական ձևով։ Վարդար կալչունություն 10 միլիմետր հաստատելու միջոցով։ Բարբիտի շերտը պահանջներում 10 միլիմետր հաստություն ունի։

Մուկայի գիտահետազոտական ավտո-տրակտորային ինստիտուտի (ՀԱՏԻ) փորձերը ցույց են տվել, վոր այդ հալվածքով կտրելի յի (NATI) փորձերը ցույց են տվել, վոր այդ հալվածքով կտրելի յի անել բարակ պատեր ունեցող ավտոմոբիլների պահանջները լիցք անել նաև բարակ պատեր ունեցող ավտոմոբիլների պահանջներ։ Ավելա, վորանդ բարբիտը պահպատ ե միմիայն անագման շնորհիվ։ Ավտոմոբիլների վրա կատարված փորձերը ցույց են տալիս, վոր այս հալվածքը կտրելի յի գործադրել նաև այլ շարժիչների վրա, բացի շողեկամանիցներում 10 միլիմետր հաստատելու միջոցով։

Հատուկ բարբիտներ

Հարվածքի մարկան	Քիմիական բաղադրությունը առկուներով						Մեկ առնենի զինձ առը- լեներով
	Անագ	Սուր- մա	Պլենձ	Գրա- ֆիտ	Կալցի	Նատ- րի	
Ե-գրաֆիտաց- ված բարբիտ	10	14	2	0,17	—	—	Ցացածը
Ե-НТԿ	—	—	—	—	0,8	0,7	Ցացածը 700 մ.
Կապարալին բրոնդ	—	—	70	—	—	—	29,5 և զանազան խոռնություններ 0,5 և

Ժամանակակից տեխնիկայի զարգացումը շարունակվում է։ Հրապարակ են դալիս այնպիսի կարողության շարժիչների կոնստրուկցիուններ, յերբ սովորական բարձր-կապարալին բարբիտներն անկարող են այդ կարողության շարժիչները պահանջները բավարարել։ Նրանք չեն մնում առանցքակալներում, դուրս են մղվում, արագորեն հալչում են և փոխարինելու պահանջ առաջացնում։ Այդ կատարվում և հզորութիւնի ինքնաթիւներում։ Այսպիս, որինակ, սեմբիկյան կերտիս Փիբրման սավառնակների առանցքակալների բարձրունակ կապարե բարբիտը փոխարինել ե նոր հալվածքով—կապարալին բրոնդով։ Սա մի ձուլվածք և պղնձի ու կապարի, ապա նաև վորը բանակությամբ, մինչև 0,5% նիկելի բազադրության։ Այս փափուկ հալվածքը լցում են պողպատե պահանջի մեջ, և նրա վրա մնում ե առանց վորեան մեջում կաղապարի մեջ, և նա լցվում է 1000°-ից ավելի տաքություն ունեցող կապարալին բրոնդի հալվածքով։

Այս պայմաններում բրոնդն այնպիս ամուր ե նստում պահանջին, վոր զոդվածքի տեղից կտրել բաժանելու անհնարին և լինում—պոկլում ե ինքը կապարալին բրոնդը։

ԱՍԱՆԴԱՐՏ ԲԱՐԲԻՏՆԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Բարբիտների բաղադրության մեջ մտնող մետաղների հալման առաջանաները։

Անագ . . .	232° C	Կողմի . . .	320° C
Կապար . . .	327° C	Մինդեղ . . .	814° C

Սուրմա. . . 631⁰ C

Պղինձ

Կալցի . . . 810⁰ C

Նատրի. . . 97⁰ C

Տաքության աստիճանների խիստ տաքքերությունը պահանջում է տաքության ավելի ցածր աստիճանում հալչող մետաղներն այրվելուց ազատ պահելու պատճառով բարձր աստիճանում հալվող մետաղները հնոց մոցներ վորպես լիգատուրներ:

Լիգատուրներ են կոչվում միջանցի հալվածքները, վորոնց մեջ մետաղներից մեկն և ավելի մեծ տոկոսով գտնվում, քան վերջնական հալվածները: Ծյսպես կապարաւանագային բարբիտները պատրաստելուց առաջ, պատրաստվում են պղինձի լիգատուրա՝ սուրմա-պղինձից: Նաբարձկացած է 62% պղինձից և 38% սուրմայից և հալչում և 630° տաքության մեջ: Պատրաստում են պղինձը հալելով, նրան սուրմա խառնելով և խառնուրդն ածխի շերտով ծածկելով:

Մկնդեղ-կաղմիի բարբիտի մեջ մկնդեղ խառնելու համար նույնական պատրաստում են լիգատուր—սուրմային մկնդեղ խառնելով: Դրա բարձրությունն է՝ 20%, մկնդեղ, 80% սուրմա: Հալման աստիճանն է 615: Հալվածքի մեջ լիգատուրայի յեղանակով պղինձ և սուրմա խառնելու շնորհիվ հալվածքը 650° ավելի բարձր տաքացնելու պահանջը վերանում և վորոշ քանակի հալվածք պատրաստելու համար նախատեսված մաս կազմարը հալում են ածխի շերտի տակ և տաքացնում մինչև 500°: Տաքության այս աստիճանում խառնում են սուրման և պղինձը ու մկնդեղի անհրաժեշտ քանակի լիգատուրան (Բ.Մ.Ք. հալվածքի համար): Ամրող այս խառնուրդը տաքացնում է 600—650° և պահում այս տաքության մեջ մինչեւ սուրմայի և լիգատուրայի հալչելը: Լուծվելուց հետո հալվածքը խառնում է և մնացորդ $\frac{2}{3}$ կազմարը հալվածքին և ավելացնում—հալվածքը սառեցնելու նպատակով: 550° տաքության ժամանակ հալոցքին են միացնում կաղմին և անազը և, իրար լավ խոռնելուց հետո, 500° տաքություն ունեցող հալցքը լցնում են կաղապարները:

ՀԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԿՈՐԱԳԻԾԸ

Մետաղներն ու հալվածքները (ուլաւս) բյուրեղային նյութեր են: Նյութի բնությունն ամենից լավ կարելի յեւ վորոշել նրա բեկածքից: Անձն (ամորֆ) մարմինները խեցածե բեկվածք ունեն—կոր մակերեսներով: Բյուրեղային մարմիններն ունեն հատիկածե բեկվածք: Այդ առաջանում է նրանից, վոր բյուրեղները տաքքեր ուղղություններում տաքքեր հատկություններ ունեցող նյութեր են, մարմնի մանրագույն մասները՝ առաջնական մակերեսով (BC): Հետագայում ջերմության աստիճանը նորից շարունակում է իջնել, և մեր կորագիծը նորից և իջնում (հատ-

քեր սողություններով: Որինակ՝ մի ուղղությամբ բյուրեղը հեշտաւթյամբ կարող է կոտրվել, իսկ այլ ուղղությամբ դժվար է կոտրվում: Այդ առաջանությունը և նրանից, վոր բյուրեղի հատկությունները՝ առաքեր սողություններով—տաքքեր են լինում (որինակ՝ փայլարը):

Յերբ մետաղը հալված վիճակումն է գտնվում, նա միապաղայ հեղուկ ե: Տաքության աստիճանն իջեցնելով՝ հեղուկ վիճակում դառնված հալվածքը կորցնում է իր աաքությունը, և մի վորոշ ժամանակ անցնելուց հետո հալվածքի մեջ նկատվում են պինդ մասնիկներ: Հալվածքի մեջ այդպիսի մասնիկները յերկում են միաժամանակ բավականից առաջակությամբ: Տաքությունն ավելի իջնելով, այդ անքաղաքույն բյուրեղներն սկսում են աճել (մեծանալ) և հալվածքը հեղուկ վիճակից պինդ վիճակի յեւ փոխվում:

Ամեն մի առանձին մասնիկի շուրջը մարմնի աճը կատարվում է վորոշ սրենքով, և այս գեպքում, յերբ բյուրեղիկի աճը խանգարող հանգամանքներ չկան, մենք ստանում ենք կանոնավոր արտահայտված արտաքին գծագրություններով բյուրեղներ: Հալվածքի մեջ բյուրեղացումը միաժամանակ տեղի յեւ ունենում մի քանի կետերում, այդ պատճառով և, հետագայում, բյուրեղներն ընդհարվում են միմյանց և խանգարում մեկը մյուսին՝ արտաքին ձիշտ գծագրություններ ընդունելու:


Սակայն միայն նրանց արտաքին կողմն և այդպես փոփոխվում ներքին կառուցվածքը մնում է նույնը: Մետաղի սառած կտորները (մասնիկները) շարունակում են աճել և ձեւավորվել առանձին հատիկներով:

Այս հալվածքում, վորի մեջ մեկից ավելի մի քանի մետաղներ կան, ուրածյալ կառաջանան մետաղե բյուրեղներ, և մետաղի պինդ կառորը դարձյալ մետաղե հատիկների մի զանգված կներկայացնի: Սակայն հալվածքի սառչելու պրոցեսը և նրա կառուցվածքը, սառչելուց հետո, պինդ վիճակում—ավելի բարդ և ստացվում, քան մաքուր մետաղինը:


Յեթե մենք վերցնենք մաքուր մետաղը, հալենք ու հալվածքը տառչնություն կրոցեսը նշանակենք դիագրամով՝ ուղղահայաց գծով—տաքության իջնելը, հորիզոնական գծով—ժամանակի տևողությունը, առապոցեան այսպես տեղի կունենա:

Ժամանակն անցնում է, մետաղը սառչում, տաքությունն ընկնում և կորտպիծն իջնում (նկ. 1, հատված (AB)): Վորոշ ժամանակի անց՝ մենք նկատում ենք, վոր տաքության աստիճանն այնս չի փոխվում: Ժամանակն առաջ և անցնում, իսկ ջերմաչափը ջերմության նույն աստիճանն է ցույց տալիս: Մեր դիագրամում այդ յերկում է վորոշ հատիկներն առաջնական մակերեսով (BC): Հետագայում ջերմության աստիճանը նորից շարունակում է իջնել, և մեր կորագիծը նորից և իջնում (հատ-

գած ՕՇ): Այդ ժամանակ մենք նկատում ենք, վոր հալվածքն արդին ամբացել է: Մեր ստացած կորագիծը ցույց է տալիս, վոր մաքուր մետաղը հաջում է վորոշ և հաստատուն զերժության աստիճանում: Զանազան բաղադրությունների հալվածքի սառչելը ճիշտ հենց ուշյն ձեզով կարելի յե զիտել և փորձով վորոշել նրանց հալվածքի սկզբնական



Նկ. 1. Մետաղի ստացման
կորագիծը:



Նկ. 2. Զանազան բաղադրությունների
հալվածքների ստացման կորագիծը:

և ստացման զերմաստիճանը: Վորսե մարմինի հալվածքի հեղուկի մեջ՝ պինդ բյուրեղի առաջնարուն զուգադիպում և հալոցքի թափնված տաքության մի վորոշ քանակի հայտնաբերում, վորը և կարճ ժամանակով դադարեցնում և զերմաստիճանի իջնելը: Հալվածքի ստոչելու այս դաշտագումը ստացման կորագծի վրա նկատելի յե դառնում մի թեքվածքով (Նկ. 2, կետ A):

Կատարելով ստացման փորձ այսպիսի հալվածքների, վորոնց մեջ յերկու մետաղ կա, և վորոնք ստացմանելիս բյուրեղանում են առանձին-առանձին, այդ մետաղներն իր մեջ տարբեր քանակով պարունակելով, — մենք կստանանք ստացման մի շարք կորագծեր և նրանցով կորոշենք հալվածքի սկզբնական զերժությունը և նրա վախճանական ջրեժությունը:

Նշանակելով հալվածքի հալման սկզբի և վերջի զերմաստիճաններն ուրիշ գիտագրամի վրա, վորտեղ հօրիգոնական գծով տրված և հալվածքի բաղադրությունը, մնաք կստանանք այսպիս կոչված «հալոցքի զրության» գիտագրամ: Այս գիտագրամները գործնական մեծ նշանակություն ունեն, վորովհետեւ հնարավորություն են տալիս վորոշելու ամեն


բաղադրության հալոցքի հալման սկզբի և վերջի զերմաստիճանը: Այս զերմաստիճաններից յելնելով՝ սահմանում են հալոցքի հալման և կաղապարների տաքացման զերմաստիճանները: Յերկու մետաղներից բաղկացած հալվածքները, համաձայն նրանց կառուցվածքի, կարելի յե բաժանել հետեւյալ հիմնական խմբերի:

1. Յերկու առանձին մետաղներ, վորոնք հալված վիճակում են գտնվում, իւսու են խառնված: Սառչելով՝ նրանք բյուրեղանում են առանձին-առանձին, և ամրացած հալվածքի մեջ առանձնացած վիճակում են լինում: Որինակ՝ կաղարային բրոնզը, պղնձի բաղադրությունը (հալվածքը) կապարի հետո: Նկարի վրա յերկում ե այդպիսի հալվածքի կառուցվածքը:


Վագարելով այդ հալվածքի մեջ ստած մետաղները չեն խառնված, վոչ հեղուկ և վոչ պինդ վիճակում: Մենք առանձնացված վիճակում ենք տեսնում պղնձնել՝ լուսավոր շերտով, կապարը սև շերտով (Նկ. 3)

2. Յերկու մետաղները լինեար սուր կեպով խառնված են իւսու բե՛նեղուկ յեկ բե՛նեղ պինդ վիճակում: Սառչելով գոյացնում են այսպիս կոչված պինդ լուծվածք վոր բյուրեղանում ե ինչպես մաքուր մետաղը:

Այդպիսի հալվածքի մի կտորը ներկայացնում է մի զանգված տառածին բյուրեղացած հատիկների, վորոնք, ինչպես այդ նկատվում են կարի վրա, յերկում են կանոնավոր բջիշների ձևով: Այդ կառուցվածքի որինակը տառած ե Նկ. 4-ը: Այդպիսի պինդ լուծվածքներ են ստացվում, յերբ սառչում ե սուրճայիկ անագի հալվածքը: Անագի և Օ-ից մինչեւ $10^{\circ}/_0$ սուրճայի հալվածքը կազմում ե




Նկ. 3. Կաղարային բրոնզի կառուցվածքը



Նկ. 4. Յերկու մետաղների լինեար

խառնուրդի կառուցվածքը:




Ալ. 4. Ենթական մեջ դիմումներ:

ա—ալֆայի պինդ լուծվածք: Մոռավորապես հավասար քանակով սուբմայի և անագի (ագելի ձիշտը՝ $40-45\%$ սուբմա) հալվածքն առաջացնում է Յ—բետայի ըյուրեղներ, զորոնք հայտնաբերվում են զարպես կանոնավոր, սպիտակ խորանարդիկներ: Այն հալվածքները, զորոնք պարունակում են $10\cdot ից$ մինչև 40% սուբմա, կազմում են միտքամանակ ալֆայի և բետայի բյուրեղներ:

Մեծ քանակությամբ անտգ պարունակող Բ-83 բարբիտը բաղկացած ե ալֆա և բետա բյուրեղներից, այդ պատճառով և այդ բարբիտը կարևոր նշանակություն և ստանում:

3. Յերկու մետաղներ խառնվում են իրար նեղակ վիճակում, չեն խառնվում պինդ վիճակում: Այս սխեմայով և կապարվում կապորությամբ հալվածքների ստանցումը, զորոնք (կապար-սուբմա) հիմքն են կազմում կապարա-սուբմա-անագային բարբիտների: Այս հալվածքները, զորոնք բաղկացած են հեղուկ վիճակում իրար խառնվող և պինդ վիճակում չիտանվող մետաղներից, դրանք առանձին հատկություն ունեն: Այսպիսի շատ հալվածքների մեջ կա մեջը զորոշ մի բազարության հալոցք, զորը մշտառել ջերմաստիճանում սառչում և ինչպես մաքուր մետաղը և պինդ վիճակում ոժաված և տուանձին հատկությամբ: Այդ հալվածքը կազմում է յերկու մետաղների մանրագույն կորպածքներից (բեկորիկներից), զորոնք հալոցքին շերտավոր տեսք են տալիս: Կապարի և սուբմայի հալվածքների համար այդպիսի եվտեկտիկ հալվածքը հետեւյալ բազարությունն ունի -87°C կապար և 13°C սուբմա, և հոլչում է 242°C -ում: Փորձի միջոցով պարզված (սառեցման կորպածքի, ինչպես նկարագրված և վերը) տարբեր բազարությունների հալվածքների ստանցման սկզբի և վախճանական ջերմաստիճանները արգել են զիազրանում (նկ. 5), միացրած հասա գծերով:



Նկ. 5. Կապար-սուբմա (ծարքաբար) հալվածքի կոռուցվածքների սխեմաներ:
e) եվտեկտիկ հալվածքի շերտերի մեջ սպիտակ սուբմայի բյուրեղներ կան:
f) եվտեկտիկ հալվածք:
g) եվտեկտիկ հալվածքի շերտերի մեջ կապարի ու բյուրեղներ կան:


Այդ զիազրամի վրա ուղղահայցաց զծով նշանակված են ջերմաստիճանները, նորիզոնական զծով—հալվածքի բազարությունները: AB

և BC դերի վրա նշված են հալվածքի սկզբի ջերմաստիճանները՝ DBE դիմք ցույց և տալիս եվտեկտիկայի սառեցման ջերմաստիճանը՝ 242° , այսինքն հալվածքների սառեցման վախճանը։ Բոլոր այն հալվածքները, վորոնք ավելի մեծ քանակությամբ սուրմա կամ կապար են պարունակում, քան եվտեկտիկ բաղադրության հալոցքը, կտան մասն պարունակում, քան եվտեկտիկ բաղադրության հալոցքը, կտան մասն պարունակում, մի ավելի քարձր ջերմաստիճանում և այն ժամանի այդ ավելցուկը մի ավելի քարձր ջերմաստիճանում և այն ժամանակ, յերբ հեղուկ հալվածքը կալվատանս առանձնացած մետաղով, և նրա բաղադրությունը կհասնի եվտեկտիկի բաղադրության (87% կտան, 13% սուրմա), ամբողջ հալվածքը բոլորովին կսառչի 242° -ում։


Այսպիսի հալվածքի կառուցվածքը կտարբեցվի եվտեկտիկ հալվածքի կառուցվածքից նրանով, վոր հալվածքի մեջ, բացի եվտեկտիկ շերեքց, կինեն սպիտակ սուրմայի բյուրեղներ կամ կապար և բյուրեղներ։

ԲԱՐԲԻՏՆԵՐԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՅԵՎ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախորդ գլխում մենք ծանոթացանք կապար-սուրմա և սուրմա-անագ հալվածքների (խառնաձույլ) կառուցվածքին։ Կապար-սուրմա հսուրմա-անագ հալվածքները կապարե և անագե բարբիտների հիմքն են կազմում։



Նկ. 7a և 7b. Բ-83 բարբիտի կառուցվածքի լուսանկարը



Այժմ ծանոթանանք բոլոր ստանդարտ բարբիտների — Բ-83, Բ-ՄԿ, Բ-16, — Բ-10 և Բ-С — կառուցվածքին,

Բ-83 բարբիտը պարունակում է 83% անագ, $11-12\%$ սուրմա և $5-6\%$ պղինձ։ Ինչպես տեսանք, անագի և սուրմայի $11-12\%$


խառնուրդի հալվածքը կազմված ե ալֆայի բյուրեղների պինգ լուծացմբից և բետա բյուրեղներից, վորոնք հայտնաբերվում են վորպես սպիտակ բորանարդիկներ։ Նկար 7-ա և Բ-83 բարբիտի կառուցվածքի լուսանկարն եւ։ Սեվ մասն ալֆայի բյուրեղներն են, սպիտակ քառակուսիները — բետա բյուրեղներն են, վորոնք պարունակում են սուտագործեած հավասար քանակի սուրմա և անագ։ Մանր ու սպիտակ քառունիկների և աստղերի ձևով բյուրեղներն արդյունք են պղնձի և անագի քիմիական բաղադրման։

Բ-83 հալվածքի սառեցման ջերմաստիճաններն են՝ 390° —հալվածքի սառեցման սկզբը, յերբ հայտնաբերվում են պղնձի և անագի քիմիական բաղադրության բյուրեղները։ 266° -ում յերեսում են բետա բյուրեղները։ 236° -ում հայտնաբերվում են ալֆա բյուրեղները։

Բարբիտ պատրաստելու պրոցեսը բավական պարզ եւ կայտնում են հետևյալ առանձին պրոցեսներից։ 1) մասնակից մետաղների զտում, մից, 2) միջանցուկ հալոցքի պատրաստումից (պղինձ և սուրմա), 3) բարբիտի պատրաստումից և 4) հալված բարբիտը կապարաների մեջ լցնելուց։ Բարբիտը պատրաստելու համար սուրմարար վերցնում են մաքրած պղինձ, վորի մեջ մինչև $99,5\%$ մաքուր քիմիական պղինձ եւ կապար վերցնում են ալավերյան կամ բիզերովյան, վորոնց մեջ մինչև $99,7\%$ մաքուր քիմիական կապար եւ։ Անագը մինչև որս զերուոց չափով ներմուծվում ե արտասահմանից։ Անագ շատ կա թուվիայում, Ավագարակայում, Մատկիայում և Մալայան Արշակունյաց պատմական մասում և պատմական մասում առաջարկվում է պղինձ մասն ասեղները։ Բորչինյան շրջանում (Զաբայկալ)։

Բարբիտի համար գործածվող անագի մեջ $99,9\%$ մաքուր քիմիական անագ պիտի լինի։ Սուրման ել մեծ քանակությամբ ներմուծվում ե արտասահմանից։ Նրա մաքրությունը հավասար պիտօք ել լինի $99\%_0$ -ին։

Բարբիտ պատրաստելու պրոցեսը շատ բարդ չէ։ Սկզբից պատրաստած են պղնձի և սուրմայի հալոցքը, վորի մեջ 50% պղինձ եւ, իսկ 50% սուրմա։ Այդ հալոցքը պատրաստում են «Մեծա» տիպի վա-



Խ. 8. Կապար-սուրմա եվտեկտիկը, սուրմայի սպիտակ բյուրեղները և պղնձի ու սուրմայի քիմիական միացման ասեղները։


ռարմաններում: Ակզրից վառարանը տաքացնում է հետո լցնում են Հալոցքի մեջ 250 կգ պղինձ. յերբ պղինձը հաջում է, սկսում են պիտի լուսնայի սուրման: Սուրման լցնելիս 4—5% ավելին վերցնում, վորով հետև սուրման հակում ունի գոլորշիանալու և կորուստ տալու: Հալելու տեսողությունը 2 ժամ է տեսում: Յերկու ժամ տեսողությամբ հալելուց հետո ավելացնում են համապատասխան քանակությամբ տնագ, նայած թե ինչ մարկայի բարբիտ պիտի պատրաստվի:

Հալվածքի տունձին բաղադրությունների պնդություններն են ըստ Շորի:

Կապարի և սուրմայի եվտեկտիկը · 10
Սուրմայի բյուրեղներինը. · 59
Պղնձի և սուրմայի քիմիական միացման բյուրեղներինը. · · 88

Կապար-սուրմա-անագային բաբբիտները, բացի Բ.Ծ բաբբիտի մեջ մտնող մետաղներից, անազ ել են պարունակում: Հալվածքում գտնված բոլոր մետաղներից անազն ամենից ավելի յի ձգտում զեափի սուրման, և հալվածքը սառչելուց անազը սուրմայի հետ միացած է զատվում, վորպես մեկ ամբողջություն, բետայի բյուրեղների ձևով: Այս բետարյուրեղները միևնույն բաղադրությունն ունեն, ինչ Բ-83 բաբբիտում: Այդ պատճառով և կապար անագային բաբբիտների սրտաքին կառուցվածքը վոչնչով չի տարբերվում Բ-Ծ բաբբիտի կառուցվածքից:

Մետաղի հիմնական զանգվածը (մասսան) եվտեկտիկան եւ հալման 242⁰-ով. պնդությունն ըստ Շորի՝ 14 եւ եվտեկտիկի՝ մեջ են մտնում բետա բյուրեղները—ամբությունը 40, և պղնձի ու սուրմայի քիմիական միացման ամեղները: Սրանց ամրությունն են 88:



Հալվածքին ավելացրած անազը բարձրացնում է եվտեկտիկի գիտացկունությունը և տուած բերում բետայի մեծ քանակության արդի և այլ տեսակի բյության պինդ և այլ տեսակի բյության պինդական մասունքը: Այդ պաճառով և կապար-անագային բաբբիտաներն ավելի դիմացկուն և ամուր են կապարային բաբբիտներից: Նկ. 9-ը կապար-անագային Բ-16 բաբբիտի կառուցվածքի լուսանկարն է:

Կապարա անագային բաբբիտների ճգնաժամային ջերմաստիճանները բերված են № 4 աղյուսակում:

Աղյուսակ № 4

Հալվածքին մարդան	Հալվածքին սառեցման մկանը	Բետա բյության բեղների զատկելը	Հալվածքին սառեցման գերջը
Բ-16	510 ⁰	262 ⁰	2420
Բ-10	416 ⁰	253 ⁰	2420
Բ-ՄԿ	3850	250 ⁰	2420

Իր բաղադրությամբ ավելի բարբը և կապար-անագային բաբբիտներից լավագույնն են Բ-ՄԿ բաբբիտը, վորը պարունակում է 11—12% սուրմա, 11,12% անագ, 1,5% (պղինձ), 1,5% կադմի և 1,5% մենդեզ: Այս հալվածքի մեջ նոր մետաղներ են հանդիսանում մկնդեղնու կադմին: Այս մետաղների ազդեցությունը հալվածքի կառուցվածքի վրա հետեւյալն է:

Մկնդեղն ընդունակ լինելով լիովին լուծվելու և սուրմայի և անագի մեջ—թե հեղուկ և թե պինդ վիճակում—կազմում են յերեք տեսակի պինդ լուծույթ այս մետաղների հետ՝ առաջացնելով բետայի բյուրեղներ:

Հալվածքի մեջ մկնդեղի ներկայության շնորհիվ պինդ բյուրեղների հատիկների մեծությունը խիստ փախվում է: Հալվածքի կառուցվածքը դառնում է մանր բյուրեղային: Դեռևս հեղուկ հալոցքում առաջանում են միաժամանակ ավելի քանակությամբ կետեր, քան մկնդեղի հալվածքներում, վորտեղ սկսում են ձևավորվել բյուրեղները, և գրա շնորհիվ հալոցքը մանրահատիկ կառուցվածք եռ ունենում: Այս մկնդեղ-կադմիի բաբբիտի ամենակարևոր հատկությունն է: Այսուղ մենք կէիզնք միայն Բ-ՄԿ բաբբիտի հատուկ բաղադրության ազդեցությունը բարբարի կառուցվածքի վրա:


Բ-ՄԿ բաբբիտի մեջ մտնում է կադմին, լուծվելով կապարի մեջ՝ ամրացնում է հալվածքի հիմնական մասսան և, բացի այդ, քիմիապես միանալով սուրմային (պղինձ, զորչ, բյուրեղների ձևով) նույնակես բարձրացնում է հալվածքի պնդությունը:

Վերջացնելով բաբբիտների կառուցվածքի մասին մեր խոսքը՝ անհրաժեշտ են մատնանշել նույնակես նրանց մի այլ խմբավորումը:

Այդ խմբավորումը կապար-անագային զոդման խմբավորումն է: Նկար 10-ը պատկերում է կապար-անագային հալվածքների կառուցվածքի զիստրամը: Դիտելով այդ զիստրամը՝ մենք տեսնում ենք, վոր սովորական յերեքյակը (որետու) իր մեջ պարունակում է անգու—64%: մնացածը կապար-եվտեկտիկ հալվածք է, վորը հաջում է անագի հալման ջերմաստիճանից ցածր՝ 180 անփոփոխ ջերմաստիճանում:

Յերեքակի այս ցածր և անփոփոխ ջերմաստիճանում հալչելն այդ հայցին տալիս և զործնական տուավելություն մյուս հալվածքներին նկատմամբ:

Sn-Pb



Նկ. 10. Կտագր-անում հալվածքների կառուցվածքի դիագրամը:

30%-անոց տղթատ յերեքակը հալչում և արգեն 180°—260° ջերմաստիճանում և ավելի պակաս գործնական եւ Բացի այդ, մեծ քանակությամբ կտագրը պարունակելով իր մեջ—ավելի յերակած թթվառանալու:

Մանօթանալով բարբիտների կառուցվածքին, մենք նկատում ենք, որ այս անտիֆրիկցիոն բարբիտները միատեսակ կառուցվածք չունեն, այսինքն՝ նրանք կազմված են տարբեր տեսակի բյուրեղներից գորոնք ունեն տարբեր պնդություն և հալչում են տարբեր ջերմաստիճաններում:

Անտիֆրիկցիոն հալվածքների այսպիսի կառուցվածքը պատահական չէ, այլ բղինում և բարբիտների աշխատանքի պայմաններից:

Բարբիտների հիմնական նշանակությունն եւ պաշտպանել պողպատելիս հիմունք վնասվելուց յեզ արագ մաշվելուց: Իր զանուզանակերպ կառուցվածքի շնորհիվ բարբիտն ընդունակ է հարմարվելու լիսեռի շփող մակերեսին: Հատկապես բարձր ճնշման ժամանակ սուրմայի կամ սուրմանագի (ըստայի) պինդ բյուրեղները իրվում են փափուկ հիմքի մեջ (ելտեկտիկ կապարային բարբիտներում կամ ալֆայի ամուր լուծույթն անովային բարբիտներում) և այսպիսով բարբիտը հարմարվում է լիսեռին առանց բարձր շփում տառաջ բերելու:

Մյուս կողմից բարբիտը պիտի ապահովի յուղումը շփման ժամանակ, վորովհետև անհրաժեշտ է, վորպեսզի առանցքակալը կանոնավոր աշխատի: Այս հատկության վրա պազում ենակ հալվածքի վոչ միատեսակ կազմը: Պինդ և փափուկ բյուրեղները տարբեր ձևով են մաշվում: Դրանորհիվ աշխատանքի ընթացքում (պրոցեսում) փափուկ հիմքն արագ ե

մաշվում, պինդ բյուրեղները մի փոքր բարձր են մնում փափուկ հիմքեց, և բարբիտի վողջ աշխատանքային մակերեսը ծածկվում է փողակների ցանցով, վորոնց մեջ մաղային (մաղանոթային) ուժերի ազդեցության շնորհիվ պաշտպանվում է յուղը:

Բացի այդ, բարբիտը սովորական և բարձր աստիճանում պիտի վորոշություն և դիմացկություն ունենա, վոր գուրս չմղվի պահանդիր միջից լիսեռի ճնշման ազդեցության ներքո:

Այսպիսով, տարբեր բարբիտների հատկությունները համեմատելու համար, փորձում են հալվածքների պնդությունը սովորական և բարձր ջերմաստիճանում, սեղմումը սովորական և բարձր ջերմաստիճանում հալվածքի պլաստիկ հատկությունը (բարձրորակությունը) ստուգելու և նրա շփման հատկությունները պարզելու համար:

Բարբիտների մեխանիկական և այլ հատկությունների այցուածակում (№ 5) բերված են հալվածքների սառեցման սկզբի և վախճանական ջերմաստիճանները: Այս այն ջերմաստիճաններն են, վորոնցից յելնելով սահմանում են պահանջների կաղապարների և լիցքի ու տաքության ջերմաստիճանները, հալվածքների պնդությունն ըստ Բիինելի՝ տարբեր ջերմաստիճաններում և հոսունության վախճանը-սովորական և բարձր ջերմաստիճաններում: Հոսունության սահման (վախճան) են անվանում այն բնոնագորումը, յերբ սեղմումի ժամանակ նյութն սկսում է տափակել:

Բարբիտների մեխանիկական յեզ այլ հատկությունները

Աղյուսակ № 5

Բարբիտի մարկան	Բարբիտի սառեցման սկզբի ջեր- մաստիճանը	Բարբիտի սառեցման վերջին ջեր- մաստիճանը	Պնդությունը տարբեր ջերմաստիճաններում				Հասունություն սահմ. կզ-ներով	
			25°	50°	75°	100°	25°	75°
Բ-83	390	236	29	25	20,5	16,2	7,6	3,3
Բ-МК	385	242	26	24	21	16,5	7,6	3,5
Բ-16	510	242	30	25	20	15	8,4	4,8
Բ-10	416	242	28	24	19	13	8,0	4,2
Բ-С	438	240	22	16	12	10	5,0	3,0

№ 6 աղյուսակում բերված են անտիֆրիկցիոն հատկությունների շփման գործակիցը տարբեր ջերմաստիճաններում և փորձի տևողության թվերն ըստ պրոֆեսոր Զայցենի („Տարություն բաբսություն ամենալավ միջացն”):

Փորձերը կատարված են հետևյալ պայմաններում: արագությունը՝ 13 մետր մեկ վայրկանում, բեռնվածությունը 3,2 կգ/սմ²: Մեծ արագության ժամանակ կատարված արդարի փորձը բարբիտի բարձր հատկությունները վարությունը ամենալավ միջացն են:

Անտառյին և կաղաքարային բարբիտների լաբորատորական փողձերի
արդյունքները խիստ դրական են Ե-ՄԿ բարբիտի նկատմամբ:
Նորմալ ջերմաստիճանում Ե-ՄԿ բարբիտն ավելի ցածր պնդություն է
ունենում, քան Ե-83 բարբիտը, և, ընդհակառակը, ջերմաստիճանը
բարձրանալու դեպքում Ե-ՄԿ բարբիտի պնդությունն ավելանում է
Ե-83-ի հանդեպ:

Բարբիտների անտիթրիկզիսն հատկուրյաւնները

Աղյուսակ № 6

Բարբիտի	Ամենա- բարձր աշ- խատանգ- ջերմաստ.	Շփման առջու- թյունը	Շփման գործակիցը		Փորձի տեսողութ- ժամերով	ՄՅԱՐԹՈՒԹՅԱՆ
			Ամենա- ցածր	Ամենա- բարձր		
Ե-83	730	560	0,017	1,022	11	Փորձը կատարված ե Զայցենի մեքե- նայի վրա պայ- մաններն արագութ-
Ե-ՄԿ	700	470	0,018	0,020	12	
Ե-16	720	530	0,017	0,022	10	
Ե-10	900	670	0,032	0,034	1,5	13 մետր (մի լ այր- կանում), թերու- թյունը՝ 23 կգ սմ ²
Ե Ը	920	700	0,026	0,036	1,0	

Շփման փորձում առաջին տեղը բանեց դարձյալ մինդեղկաղմի բար-
բիտը-դիմացավ ավելի յերկար ժամանակ, համեմատաբար քիչ տաքա-
ցավ և հայտնաբերեց շփման նվազագույն դործակից:

Ե-ՄԿ բարբիտի այսպիսի հատկությունը նրա հատուկ բաղա-
դրությունից ե առաջ գալիս: Հալվածքի մասը բյուրեղային կառուց-
վածքը, վոր բարձրացնում և նրա անտիթրիկզիսն հատկությունները,
վորոնց շնորհիվ հալվածքը լով ե պահպանում հատկապես յուղումը,
արդյունք ե հալվածքի մեջ մկնդեղի ներկայության: Բարձր ջերմաս-
տիճանում հալվածքի դիմացկունությունը կազմի ներկայության շնոր-
հիվ ե առաջանում: Հալվածքի մեջ մտած մկնդեղը հալվածքին մաս-
րաքյուրեղ հատկություն ե տալիս և հալվածքը պակաս զգայուն ե
լինում տարրեր ջերմաստիճանի ոհմիմի ժամանակ-ըցուրեղների խո-
շորության նկատմամբ, քան յուս բարբիտները: Ստորև բերված են Ե-83
(նկ. 7) և Ե-ՄԿ (նկ. 11) հալվածքների կառուցվածքների լուսա-
նկարները: Հալվածքների լիցքը կատարված ե միտահակ պայման-
ներում: Իսկ նկ. 12-ում ցույց ե տրված բարբիտի Ե-ՄԿ-ն ստոր
կտղապարի մեջ լցված:

Ե-ՄԿ բարբիտի բյուրեղացումն ավելի նվազ ե, քան Ե-83-ինը,
և այդ նվազությունն անփոփոխ ե մնում լիցքի և կտղապարի ջեր-
մատիճանը փոփոխելիս (նկ. 11—12):

Բացի այդ, մկնդեղը բարձրացնում է հալվածքի շարժունակու-
թյունը՝ հեղուկ վիճակում, և հետեւապես հալվածքն ընդունակ ե գտա-

նում կտղապարի մեջ լավ տեղավորվելու: Այսպիսով Ե-ՄԿ բարբիտի
կրական հատկություններն են՝ մանր կառուցվածքը, վորի շնորհիվ հալ-
վածքը լավ անտիթրիկզիսն է առաջ բերում—
դանդաղորեն սառչելու հատկու-
թյունը՝ տաքացնելու զեպքում և
նվազ զգայնությունը 450—550°
ջերմաստիճանի ինտերվալներով՝
հալվածքի համար և 0—200° կո-
ղապարի համար, բյուրեղի մեծու-
թյան նկատմամբ:



Ե-ՄԿ-բարբիտի թույլ կառուցվածքն ե, նրա փոփոխու-
թյունը և հալվածքի մեջ կտղա-
րի մեծ քանակությունը: Կտղա-
րը մի մետր ե, վորն ավելի յե-
նակված թթվուտանալու, քան
անազը, այդ պատճառով և այդ-
պիսի ուժեղ կտղարային հալ-
վածքի կտղունությունն ավելի յե-
նակված է կամայական:

Հալվի առնելով Ե-ՄԿ բարբիտի վերը նկարագրված հատկություն-
ները, նշենք հալման ու լիցքի
պրոցեսի հետեւյալ հիմնական
մոմենտները:

1. Հեղուկ հարվածքը միատե-
սակ պիտի լինի, բյուրեղների
մանրագույն սաղմեր չպիտի պա-
րունակե, վորպեսզի հալվածքը
միատեսակ մանր կառուցվածք
ունենա:

Բացի դրանից, հալվածքը պիտի
ունենա վորոշ քանակության պա-
հանակ ջերմություն, վոր կարողա-
նա հալցնել պահանջի վրայի զոդ-
ման շերտը և լավ լցնել կաղապարի
բոլոր անկյունները: Այդ պատ-
ճառով ե բոլոր բարբիտներին կատ-

նկ. 12. Ե-ՄԿ բարբիտի կառուցվածքը
(բարբիտ լցրած սառը կտղարի մեջ):
տաքացնել լիցքատար հալման ջերմաստիճանի՝ 50°-ից ավելի: Ե-ՄԿ
բարբիտի լիցքը ջերմաստիճանն առաջարկվում է անել 450°: Այդ ջեր-



մաստիճանից ավելի տաքացնել հալվածքը—հարկավոր չե, վորովհեաև
այդ կառաջացնի հեղուկ մետաղի մեջ գազերի ուժնեղացած տարրալու-
ծում (մանրահատում), վոր լիցը ծակոտկեն կղարձնի, կշառացնի
գոլտրիհացումը, այսինքն առաջ կրերի բարբիտի անտեղի ծախսում,
իսկ 500° -ից բարձր տաքության դեպքում կարող ե բոլորովին փշացնել
բարբիտը—այրելով հալվածքի միջի ոգտակար մետաղները (սուրմա,
անագ, կաղմի, մկնդեղ) և հալվածքը կղարձնի խարամի (ալակ) մի
զանգված:

2. Պահանջն ու կաղապարը տաքացնելու նպատակն ե առաջ բերել
լավ կպչունություն, հաջող լիցը կատարել: Այդ նպատակով պահանջն
ջերմաստիճանն առաջարկվում ե անել 180° — 200° (յորք զորվածքը
դեռ հեղուկ ե), իսկ կաղապարի ջերմաստիճանը՝ մոտ 170° , վոր այն-
անուղղությունում հեղուկը վայրէենապես չսառչի, այլ կարողանա լավ լցնել
կաղապարի բոլոր անկյունները:

3. Լիակատար կպչունության հիմնական պայմաններից մեկն այն
է, վոր պահանդի մակերեսը մաքուր լինի ու լավ հղկված և պահանդր
լիքը անտպվի:

ՇԱՐԺԻՉԻ ԱՌԱՆՑՔԱԿԱԼՐԵՐԻ ԲԱՐԲԻՏԻ ԼԻՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ*

Թանկարժեք բարձրորակ Բ-83 բարբիտն եժան հալվածքով վա-
խարինելու պրոբլեմը—այնպիսի մի հալվածքով, վորը կարելի լիներ
պատրաստել ԽՍՀՄ-ում ստացվող նյութերից,—վաղուց և առաջ քոր-
ված կառավարական բարձր մարմինների կողմից և առաջազրված զի-
տահետազոտական ինստիտուտներին:



Այս ուղղությամբ կատարված և վորոշ աշխատանք և ձեռք են բեր-
ված հաջողություններ, վորի հետևանքով ԽՍՀՄ-ի ժողովրդական աշխ-
տեսությունը մեծ գումարներ և տնտեսում և յերկիրն ազատում և ներ-
մուծումից (իմպորտացից): ԽՍՀՄ-ի յերկաթուղային տնտեսության մեջ,
վորը մեծ քանակությամբ բարերիտ և սպառում, ներկայումս զործո-
ղրվում և բարբիտի մի նոր տեսակը, այսպիս կոչված «կալցի բարբի-
տը», վորը ավել և դրական հետևանքներ: ԽՍՀՄ-ի տրակառորդին
անտեսությունում առանձին տնտեսությունների մեջ, վորձի նպա-
տակով գործադրվել և «ըսնդբարատ-բարբիտը»:

Առանցքակալների լիցըն ու մեխանիկական մշակումը բոնդրառ-
բարբիտով՝ զրական, բավարար արդյունքների հասնելու անսակեալից,
զսրծնականում մի շարք դժվարություններ առաջադրեց: Այս կապակ-

* Առց-զյուզանտեսության մեխանիզացիայի համամիութենական ինստիտուտի
հրահանդից:

2730

900



Բարեխտի լիցք կատարելու հատուկ դաշտոյան:

ցությամբ սոց-զյուղատնտեսության մեխանիզացիայի Համաժիշտթենական ինստիտուտը կատարել է լիցքի բազմաթիվ փորձեր՝ նպատակ ունենալով մշակել լիցքի սացիանալ տեխնիկան։ Այդ փորձերի հիման վրա յել մշակված են շարժիչ առանցքակալների լիցքը կատարելու տեխնիկայի մեթոդները։ Լիցքը կատարելու համար մատնանշված ցուցումներն ու տեխնիկական միջոցներն ապահովում են առանցքակալները բոնդրատ-բարեիտով լցնելու գործը, տալով բազարար հետևանքներ։ Բացի դրանից, այսակեղ բերված են նաև կարեւոր աեղեկություններ բարբիտների վերաբերյալ, ցուցումներ բանվորական կետերի գործիքների և աշխատանքի ասրբավորման մասին։

ԲԱՐԵՒՏԻ ԴՐՈՇՄԱՆՆՇՈՒՄԸ (ՄԱՐԿԻՐՈՎԿԱԱՆ)

Բարբիտը ձուլում են ստանդարտ չափերի կտարներով, վորոնց քաշը 3 և 4 կիլոգրամ ե։ Բարբիտի սահմանակարտ կտորը կնքված է ձուլվածքը կատարող գործարանի դրոշմով։ այսպիս՝ ՄԳՍ բարբիտ, ԼՍ բարբիտ։ ՄԳՍ-ը Մոսկվայի Պետական Ուսումնական գործարանն է, ԼՍ-ը՝ Լենինգրադի Ուսումնական գործարանը։

Կառի տակը դրոշմված է լիցքի համարը և բարբիտի մարկան՝ Ե-83, Բ-ՄԿ, վորը նշանակում է մինչեղ և կադմի պարունակող բարբիտ, կամ Ե-83 նշանակում է 83⁰/₀ անագ պարունակող բարբիտ։

345-ը բարբիտի ձուլվածքի համարն է։

Բ-ՄԿ կամ Ե-83-ը բարբիտի մարկան է։

ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑԲԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՏԸ

Առանցքակալների լիցքը կատարելու նպատակին ծառայող բանվորական կետը պիտի ունենա հատուկ զազդյան (նկ. 13), վորը հարմարեցված պիտի լինի առանցքակալների լիցքը նպատակահարմար ձևով կատարելու պահանջներին։ զազդյանը պիտի ունենա արկղներ, վորոնց մեջ պիտի պահպեն հարկավոր գործիքները, պահանդներ, շարժանակներն ու բարբիտի թափվածքները։ Այն դազգյանը, վորի վրա յե կատարվելու բարբիտի լիցքը, պատաճ պիտի լինի յերկաթե թիթեղով, այն նպատակով, վոր դազգյանը մաքուր պահպի և պատահականորեն դազգյանի վրա թափված բարբիտի մանր կտորները չազառութեն և հավաքելիս մաքուր լինեն։

Բանվորական կետի վերևուր զազերն ու ծուխը դուրս գնաբու համար—խողովակավոր գլխանոց պիտի լինի շինված։

Լիցքը կատարելու նպատակին ծառայող բանվորական կետն արևատանոցում այնպիսի կետ պետք է լինի, վորը բազարար չափագույով ապահովված լինի։



Առանցքակալների լիցքը կատարելուն անհրաժեշտ գործիքներն ու սպասքներն—ամեն մի ոպերացիան կատարելու համար — բավարար քանակով պիտի լինեն, վորպեսզի նույափինք աշխատանքն անտեղի դատմաներով ընդհատելուց:

ԳՈՐԾԻՔՆԵՐ, ՍՊԱՍՔՆԵՐ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐ

1. Հալոցի լամպ և հալոց (տաշըլե)	1 կողմեկա
2. Զողիչ լամար, 1 լիտրանոց	2 հատ
3. Շարժանակի առանցքակալների ու պահանջների լիցքը կատարելու համար — սպասք, լրիվ կոմպլեկտով (թեմետ կամ Հեմպի-Կուլպեր տիպի)	1 հատ
4. «Դազ» ավտոների բլոկների լիցքը կատարելու համար տակդիր —	1 հատ
5. «Դազ» ավտոմոբիլների բլոկի հիմնական առանցքակալ- ները բարբիտով լցնելու սպասք	1 հատ
6. Սամլակ (տաշէկ) զուզանեռ, 125 մմ.	1 »
7. Գիրոմետր կամ ճրաշափ Ը-ի 600°-ի	1 »
8. Պահանջները մամլակներում բռնելու հարմաքանք	4 »
9. Ռոշպիլ (առորդիչ)	1 »
10. Տափակ խարտոց 300 միլիմետրանոց	1 »
11. Կիսակլոր խարտոց	1 »
12. Մուրճ 800 գրամանոց	1 »
13. Առանցքակալների ձայնն ստուգելու համար մեկ մուրճիկ 200 գ.	1 »
14. Մետաղե սղոց, խոշոր ատամով	1 »
15. Կլայեկելու (անագելու) թիակ	1 »
16. Գղաւ, բարբիտը լցնելու համար	2 »
17. Ազրեստե խոզանակ՝ առանցքակալները մաքրելու համար	1 »
18. Պողպատե խոզանակ՝ «կոշտ» մաքրումը կատարելու համար	1 »
19. Քերիչ (աօեր) տափակ	1 »
20. Յեղազը (յեղակողմ) քերիչ	1 »
21. Պահանջը գրսի կողմից բռնելու գործիք	1 »
22. Բոնիչ՝ կափարիչը բռնելու համար	1 »
23. Բոնիչ ներսի՝ պահանջի համար	1 »
24. Բոնիչ պահանջների լիցքն ըստ ձայնի ստուգելու համար	1 »
25. Մուզիչ սալ (ոլուտա)	1 »
26. Զողիչ 200 և 400 գրամանոց	2 »
27. Ածուխը մաղելու մաղ	1 »

28. Կերոսինը ֆիլտրելու ցանցիկ	1 հատ
29. Թվանիշերի և տառերի կոմպլեկտ՝ գրողմանշումը կատա- րելու համար	1 կոմպ.
30. Ասեղներ լամպերի համար	1 »
31. Շարժանակ և պահանջներ հին բարբիտը հալել-հանելու առկդիր	1 հատ
32. 4 կիլոգրամանոց կոան	1 »
33. Շարլոն՝ պահանջներն ստուգելու համար	1 »
34. Ցերկաթե սալ կամ զնդան—բարբիտը կոտորելու համար	1 »
35. Թիթեղե վաննա—հալված բարբիտը հավաքելու համար	1 »
36. Կաղաղար՝ անկյունավոր, յերկաթից, յերեքյակները (տրետհիկ) — (յերեքյակ կոչվում ե այն խառնուրդը, զորի մոտ $\frac{2}{3}$ մասն անաղ ե, մնացածը կապար, ձողաձև ձուլելու համար	1 »
37. Ամաններ՝ բարբիտի թափվածքները, ձուլելու համար	2 »
38. Դույլ	1 »
39. Նավթի աման (բիտոն)	1 »
40. Ապակե անօթ—թթվուտը խածառելու համար	1 »
41. Ճենտպակե կամ ապակե զավաթ՝ նաշատիրի համար	1 »
42. Գավաթիկ, թթվուտի համար	1 »
43. Վրձիններ	2 »
44. Հրամար (օղողուածուել) — կրակը մարող սպասք	1 »
45. Արկղ՝ ավազով	1 »
46. Դեղերի պահարան՝ այրվածքներն ապաքինելու համար	1 »
47. Խալաթ՝ աշխատողի համար	1 »
48. Թաթպաններ	1 զույգ

Տանօրություն.—Խոշոր առանցքակալների լիցք կատարելու ժա-
մանակ անհրաժեշտ ե ունենալ 15 կգ տարողության հալոց և
լիցքը կատարելու համար հատուկ հարմաքանքներ:

ՆՅՈՒԹԵՐԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼԸ

Լիցքը կատարելու համար նախ պիտի պատրաստել անհրաժեշտ
նյութերը: Բարբիտը պիտի մաս մաս անել, ամեն կտորը մինչև 2 կի-
լոգրամ: Բարբիտը պատրաստ ունենալ այնքան, վորքան անհրաժեշտ ե
և մի օրվա աշխատանքի համար:

Յերեքյակն անկյունարդի մեջ պիտի լցնել և ձուլել ձողերի ձեռքի:
Աղաթթվուտը պիտի պահել ապակե մաքուր անոթի մեջ:

Թթվուտի խածառումը պետք ե կատարել — ամանի մեջ զցելով
շինի կտորներ կամ ձողեր, վորոնց քաշը 20 գրամից ավել չպիտի:

լինի: Ամանը չպիտի ծանկել (բաց պիտի պահել) մինչև ջրածնի պղպը-
ջակներ յերեւլը:

Մանրացած փայտածուխը պիտի մաղել, փայտածի գործադրվող
հատիկները պիտի լինեն 5-10 միլիմետրից վոչ ավելի մեծության: Կե-
րոսինը ֆիլտրացիայի պիտի յնթարկել վոր չինի թե նավթի մեջ
ընկած աղոտությունները (թելիկներ, ավաղ, փոշի և այլն) լամպի
անցքերը կեղուսին:

Նաշտաիրը պիտի մաքուր լինի և ապակե ամանի մեջ լցված: Խառ-
նուրդներ (փոշի, մուր և այլն) չպիտի ունենա:

Շարժանակների և պահանդիների միջի յուղատար անցքերը գոցելու
նուատակով, լիցքը կատարելուց առաջ հարկավոր և պատրաստ ունե-
նալ թելավոր կամ թիթեղաձև ազբեստ:

«Ստալինեց» արակոորի խոշոր առանցքակալները լցնելու համար
անհրաժեշտ և բավականաչափ մածիկ (զամակ) — առանցքակալների
կաղապարին թույլ հպվող տեղերը սածիկելու (ծեփելու) համար:

Մածիկի բաղադրուրիւնը

Վառարանի կավ	· · · ·	65	տոկոս
Սովորական աղ	· · · ·	17	»
Զուր	· · · ·	18	»
Բնդամենը 100			»

Դադոյաճը սրբել-չորացնելու, աղտոն ու կերոսինը մաքրելու համար
հարկավոր են փալամեներ:

ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑԲԻ ՈՐԵՐԱՑԻԱՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Առանցքակալների լիցքը կատարելու ոպերացիաները խմբավոր-
վում են ոյսպես:

ա) լիցքը կատարելու նախապատրաստություն:

բ) լիցք.

գ) մշակում լիցքն ավարտելուց հետո:

2. Առանցքակալների լիցքի ոպերացիաները ուսցիունալ յեղանակով
կատարելու նպատակով՝ անհրաժեշտ և, վոր ոպերացիաների վերը մատ-
նանշված հաջորդականությունը պահպանվի, անկախ այն բանից, թե
լիցքը կատարողը մի հոգի յե արդյոք, թե ոգնական ունի:

Առանցքակալների լիցքը կատարելու ոպերացիաների տեխնոլոգիա-
կան հաջողությունը — յուղաքանչյուր մեկ բանվորական կետի վերա-
բերյալ:

Առաջին բանվորական կետ՝ նախապատրաստության լիցքը կատա-
րելու համար:

ա) ստուգել և տեսնել, թե շարժանակն ու պահանդը պատրմատ են
հետագա աշխատանքի համար, թե վոչ:

բ) առանցքակալի կամ պահանդի հին բարբիտը հալելով գուրս
հանել:

գ) անագել:

դ) հանձնել յերկրորդ բանվորական կետ՝ լիցքը կատարելու համար:
Նախորդ բանվորը լիցքը շարժանակներն առա-
շին բանվորական կետ պիտի հանձնվին նախապես ստուգած և
ուղղված:

2. Այս դեպքում, յերբ առաջին բանվորական կետն են հան-
ձնվում շարժանակների կոմպլեկտներ, առաջին գործը պիտի լինի
շարժանակները քանդել:

3. Շարժանակներն ու միջադիրները բանվորական կետ պիտի
հանձնվին նախապես մաքրված, լվացված: Յեթե լվացումը շարժա-
նակներն ու պահանդիները բավարար չափով մաքրելու հնաբավո-
րություն չի տա, ապա առանցքակալները պիտի լվանալ վան-
նայում՝ տաք ջրով, և ապա վողողել նաև տաք, մաքուր ջրով:

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՏ – ՇԱՐԺԱՆԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՀԱՆԴՆԵՐԻ ԼԻՑԲԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

- Բարբիտը հալել:
- Սպասօքի միջուկը (սրտիկը) տաքացնել:
- Պահանդը տաքացնել:
- Լիցքը կատարել:
- Պահանդը լիցքից հետո սպասօքից գուրս տանել:
- Լիցքի վարակն ստուգել:
- Հետևյալ բանվորական կետը հանձնել:

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑԲԸ ԿԱՏԱՐԵԼԸ

- Բլոկը նեցուկին դնել ու ամբացնել:
 - Անորը նեցուկին դնել:
 - Առանցքակալները լիցքի համար նախապատրաստել:
 - Լիցք:
 - Լիցքի ծորանքները կտրել:
 - Սպասօքները հավաքել:
- Նախօրդուրյուն. — Հրմանական առանցքակալների լիցքը պիտի
կատարել գաղղահին անմիջապես սոտ այն տեղին, վորտեղ կա-
տարվում և շարժանակները և պահանդիների լիցքը, վորպեսզի կա-
րելի լինի սպատագործել միևնույն գործիքները:

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՏ – ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ՄՇԱԿԵԼԸ
ԼԻՑԲՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

1. Լիցքի ծորանքները կտրել:
2. Մաքրել:
3. Զայն ստուգել:
4. Ստուգում—սալի վրա:
5. Պահանջների նստվածքը շարժանակներին՝ ստուգել և սպլել:
6. Շարժանակն ու միջադիքները հավաքել:
7. Դրամանշում:
8. Հանձնել հետեւյալ բանվորական կետ:

ՆԱԽԱՐԱՐԱՍՈՒԹՅՈՒՆ ԼԻՑԲՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Բանվորական կետը հարկավոր և մաքրել—հեռացնելով այնուեղից մետաղատաշանքը, սղոցուկը, աղտը,
2. Լիցքը կատարելու նպատակով հարկավոր գործիքները և անօթները նախագատաստել:
- Պարզել, թե բոլմը գործիքներն առկա յեն, և ստուգել գործիքների վիճակը:
- Գործարար սպասքներն ստուգել—պահանջը կամ շարժանակը փորձի համար տեղը դնելով և ստուգելով նստվածքի հպվածությունը:
- Պահանջներն ու շարժանակը սպասարի մեջ պիտի սեղմ նստվածք ունենան, և լիցքի ժամանակ բարբիտի ծորանք չպիտի առաջանա:
- Սպասքն այնպիս պիտի կարգավորել, վոր լիցքը կատարելուց հետո խառավագածքի շիրտի հաստությունը 3 միլիմետրից ավելի չլինի:
- Լիցքը կատարելուց առաջ անհրաժեշտ և շարժանակների պահանջների պիտանիությունն ստուգել:
- Լիցքը կատարելու համար գործադրող պահանջների մակերեսները ձեղքեր չպիտի ունենան. ծայրերը վնասված կամ կողերը կտրտված պահանջներն անթույլատրի ի յեն. Զի կարելի գործադրել դեֆորմացիայի յենթարկված, շարժանակն կամ շաբլոնին լավ չհպվող պահանջներ:

Զի կարելի գործադրել դեֆորմացիայի յենթարկված ծոված շարժանակներ և շարժանակի մեջ խորասուզվող պահանջներ:

Հին բարբիտը պետք է հալել զ-դիչ լամպով, վորի համար շարժանակը կամ պահանջը պիտի դնել հատուկ նեցուկի վրա:

6. Առանցքակալները լամպի բոցով զողել կարելի յե միմիայն մինչև բարբիտի հոսկը և վոչ մի զեքը ութ շատ տաքացնել չի թույլատրվում:

7. Պահանջն ու շարժանակը հարկավոր և տաքացնել բարբիտը լըցված կողմից:

8. Հալված բարբիտով լիցքուն հալոցի մեջ հին պահանջների վրայի բարբիտը հալելու նպատակով պահանջները հալոցի մեջ խորասուզել չի կարելի, վորովհետև դրանից պահանջների մակերեսը կարող է վնասվել իսկ յերբեմն (առանձին զեզկերում) հալոցի մեջ յերկար մալուց պահանջները կարող են հալվել:

9. Հին բարբիտը հալելուց անմիջապես հետո պահանջներն ու շարժանակներն անմիջապես պիտի անագվեն՝ տաքացման ջերմաստիճաններն ուղարկությունը նպատակով:

ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԱՆԱԳՈՒՄԸ

1. Պահանջի կամ առանցքակալի մակերեսի դրության և նրանց անագութը կատարելու համար նախապարաստելու նկատմամբ առընթացը են՝

ա) առանցքակալներ, վորոնց վրայի հին բարբիտը հալված ե.

բ) առանցքակալներ, վորոնք բարբիտ չունեն, բայց վորոնց մակերեսը սաստիկ աղտոտված ու ժանդուած ե.

գ) նոր առանցքակալներ, վորոնք առաջին անգամն են լիցք ընդունում:

2. Անկախ առանցքակալների մակերեսների դրությունից՝ գործությունը են զանազան մեթոդներ նախանական մեխանիկական մաքում և յուղաթափ կատարելու համար:

3. Ցեթե այն առանցքակալները, վորոնց միջից հալվելով դուրս է հանված հին բարբիտը, լիցքի ժամանակ գերատաքացած են, իսկ նախորդ լիցքի ժամանակ լավ են անագված յեղել, ապա հալոցքը կատարելուց հետո առանցքակալների վրա կնստի բարբիտի հավասար, բարակ շերտ: Ոգտվելով հալման տաքության ջերմաստիճանից՝ անհրաժեշտ և անմիջապես առանցքակալի մակերեսը քերել-մաքրել աղքատել խոզանակով և կամ մաքուր փալասներով: Այս միջոցով բարբիտից կհեռացվեն սուրմայի և պղնձի հատ-հատ բյուրեղները, և առանցքակալն անագված կլինի: Հարկավոր կլինի առանցքակալի մակերեսը թիթե կերպով թարմացնել՝ ավելացնելով յերեքյակը:

4. Անագման համար գործադրվում է յերեքյակ (որտոնիկ) հետեւյալ բաղադրության:

Անագ	64 %
Կապար	36 »
	100 »

Հալոցքի ջերմաստիճանն ըստ Ցելսի 180° պիտի լինի:

5. Այն առանցքակալները, վորոնք չունեն բարբիտ, բայց վորոնց մակերեսը սաստիկ կեղտոտված և ժանդուած ե, պիտի:

ա) ժանդից լավ ժաքրվեն մետաղե խողանակով կամ քերիչով.
բ) յուղաթափ արվեն և լվացվեն-մաքրվեն Յուղաթափումը պետք
է կտարեն կառաւտիկ սողայի յուծույթի մեջ: Լուծույթի բաղադրու-
թյունն եւ կառաւտիկ սոդա— 10^0 %, ջուր— 90^0 %— $=100^0$ %. Յուղաթա-
փումը ավարտելուց հետո առանցքականները պիտի լվացվեն-մաքրվեն
տուք ջրով՝ 5—10. ըոպե.

գ) յուղաթափումից հետո առանցքակալի կամ պահանդի մակե-
րեսը պիտի խածատիլ վրձինով—աղային թթվուտով.

դ) առանցքակալի կամ պահանդի անազվող մակերեսը լիակատաք
կերպով պիտի խածատել.

ե) խածատումը կատարելուց հետո տեղի յեւ ունենում առանցքա-
կանների անջատումը:

6. Նոր առանցքակալները, վորոնք դեռ լիցք չեն ունեցել լիցքը
կատարելուց առաջ խածատման են յենթարկվում աղաթթվուտով.

7. Անազումն ամենապատասխանատու ոպերացիան և համարվում
է պահանջում եւ ինստրում և ուշադիր վերաբերմունք դեպի անազը:
Անազման վորակից եւ կախված առանցքակալի մակերեսին բարբիտ
կոչելու ստուժանը:

8. Անազել կարելի յեւ բարակ և կամ հաստ շերտով: Վորպեսդի
բարբիտի առանցքակալին կոչելն ապահովված լինի, նպատակահար-
սուր և անազել հաստ շերտով:

9. Գահանդը կամ շարժանակը, վորը նախապես մաքրված և այրված
(խոժատված) պիտի լինի, առքացվում եւ մինչև յերեքյակի հալման,
ջերմաստիճանը—մինչև 180^0 :

Առանցքակալի սակերեսի վրա յեն քսում յերեքյակը և անազիչ ձե-
ղիկով տարածում առանցքակալի տմբողջ մակերեսով:

10. Անազման գործողությունները (ոպերացիաները) հետեյալ-
ներն են.

ա) նախապես մաքրված և այրված պահանդը և կամ շարժանակը
տաքացվում եւ մինչ յերեքյակի հալման ջերմաստիճանը, այն և 180^0 :

բ) անազման ժամանակ առանցքակալի վրա յեն քսում յերեքյակը:
դ) անազը—անազիչ ձողիկի միջոցով հավասարաչափ տարածվում-
րում եւ առանցքակալի տմբողջ մակերեսը:

դ) տառանցքակալների սակերեսի այն տեղերում, ուր անազը վառ
և կողշում, անհրաժեշտ և մաքրել քերիչով և խածատել թթվուտով:

Մանաքուրություն.—Այս նպատակով կարելի յեւ նաշադիր գործա-
դրել բայց մաքրուր նաշադիր, վորովինետեւ նաշադիրի մեջ գտնված
խառնուրդները՝ ավաղը, փոշին և այլն, պահանդի և առանցքա-
կալի յերեսն աղտոտում են և թույլ չեն տալիս, վոր բարբիտը
լավ կպչի նրանց մակերեսին:

ե) վորպեսպի անազը հավասարաչափ ծավալի առանցքակալի ամ-
բողջ մակերեսով—առանցքակալը ձեռքի մեջ շարժում են և հետեւում,
թե ինչպես եւ բաշխվում-տարածվում անազը, աշխատելով, վոր անազը
չթափվի.

զ) հենց վոր անազը տարածվեց ու բռնեց առանցքակալի կամ պա-
հանդի մակերեսը—առանցքակալն անմիջապես պիտի դրվի լիցքի
անոթի մեջ:

ԲԱՐԲԻՏԸ ՀԱԼԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Հալոցն այրուքից, խարամից և բարբիտի մնացորդներից մաքր-
ված պիտի լինի:

2. Բարբիտի հալման ժամանակամիջոցը կարճելու նպատակով հա-
լոցքը նախապես տաքացնում են:

3. Բարբիտը հալոցի մեջ են լցնում՝ նախապես այն (բարբիտը)
կտոր-կտոր անելով, յուրաքանչյուր կտորը մոտ 2 կգ: Հալոցի մեջ լցված
ամբողջ բարբիտը պիտի լինի 4—9 կգ: Վոչ մի դեպքում այլ տիպի
(տեսակի) բարբիտ չպիտի խառնել գործադրելիք բարբիտին:

4. Բարբիտը հալեցնելիս հալման սկզբին (մոտավորապես 350^0 C)
բարբիտի յերեսը ծածկվում եւ փայտածխի շերտով, վորի հաստու-
թյունը հասնում է մինչև 30 միլիմետրի:

5. Ջերմաստիճանը 400^0 հասնելով—հալոցի միջի բարբիտն ամ-
բողջովին հալչում են:

6. Բարբիտն իր մեջ պարունակող հալոցը պիտի տաքացվի մինչև
 450^0 C: Այս ջերմաստիճանը նորմալ ջերմաստիճան և առանցքակալ-
ների բարբիտ-բռնդրատով լիցքը կատարելու համար:

7. 450^0 ջերմաստիճանը վորոշելու համար ամենից լավ և գործա-
դրել հրաչափ (պիրումետր) կամ հատուկ ջերմաչափ:

8. Հրաչափ և կամ հատուկ ջերմաչափ չլինելու դեպքում կարելի յե-
ռդապես հետեւյալ միջոցներով:

ա) Ցելսիուսի 450^0 -ի ժամանակ 2—3 միլիմետր հաստության և մինչև
10 մետր լայնության սոճու չոր մարիս (տաշեղ) հալոցի մեջ սուզե-
լով՝ մարիս 8—10 վայրկյանում կածխանա (ածուխ կղառնա):

բ) 490 — 500 C ջերմաստիճանում մարիսը բոցավառվում է 2—3 վայր-
կյան անմիջապես հետո:

ց) Ցելսիուսի 450 ջերմաստիճանում հալոցի յերեսը ծածկած ածուխը
չըցցածի հազիվ նկատելի չափով (ածխի բոցը հազիվ նկատելի կլինի):

Ածխի այրվածքը կարմրաշել եւ ածխի այրումը ցույց է տալիս,
վոր անթուրատրելի գերատաքացում է առաջացել:

զ) Ցելսիուսի 450 ջերմաստիճանը յերեսը ծածկած ածուխը
թանձրահեղ եւ գառնում ու նրա յերեսն սկսում է փայլել, վորքան հնա-

բավոր և շուտ պիտի կատարել առանցքակալների լիցքը, վոչ մի դեպքում թույլ չտալով, վոր բարբիտը չափից ավելի տաքան ո:

10. Յեթե բարբիտը գեր-տաքացած ե, առանցքակալները լցնելիս սպասքի և նրա մեջ դանված առանցքակալի հալման արանքներում արտահօսում կտա:

Ծանրություն.—Սպասքի միջուկի (սրտիկի) գեր-տաքացման դեպում ել արտահօսում կտաշանա:

11. Բարբիտի գեր-տաքանալը շատ վտանգավոր և լիցքի գորակի համար, վորովնետե բացի մատնանշված թերություններից՝ առաջանում և նաև բարբիտի գեր-թթվուտացում:

ԱՐԱՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑՔԻ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Լիցքի սպասքի միջուկը (սրտիկը) պիտի տաքացված լինի 175°—180° C:

2. Հաջորդ լիցքը կտարելիս սպասքի միջուկը չպետք է տաքացնել, այլ պետք ե բավարարվել նախորդ լիցքի հետեանքով առաջացած ջերմությամբ:

3. Սպասքի միջուկը զողիչ լամպով յերկրորդ անգամ տաքացնելուց խուսափելու համար անհրաժեշտ ե, վոր լիցքը կտարվի սխտեմատիկաբար, այսինքն՝ անոթից մեկ պահանգը կամ շարժանակը դուրս հանելուց հետո, մյուսը, վոր նախապես պատրաստ պիտի լինի, անմիջապես պիտի զրվի սպասքի մեջ՝ լիցքը կտարելու նպատակով։ Այսպիսով յերկու առանցքակալների լիցքը կտարելու միջն ընկած ժամանակամիջոցն ավելի չպիտի լինի՝ քան հարկավոր ե բարբիտը սառչելու ու նրա պնդանալու և լիցքի նպատակով հերթի դրված հետեյալ առանցքակալների անագումը կտարելու համար։

4. Լիցքի վորակը կախված ե լիցքը կտարելու արագությունից՝ սկսելով առանցքակալի անագումից։ Վորքան արագ կտարվի լիցքը, այնքան բարբիտն տվելի կլպչի (կնստի) առանցքակալի մակերեսին։

Այդ նպատակին համար անհրաժեշտ է անագման և լիցքի ոպերացիաներն անմիջապես իրար յետեից կտարել այնպես, վոր ընդմիջում չլինի։

5. Առանցքակալների լիցքը կտարելու համար սպասքը բարբիտով լցված հալոցից պիտի հեռու գտնվի մի մետրից վոչ ավելի, վորպեսզի բարբիտը հալոցից գդալով սպասքի մեջ տեղափոխելիս տաքության քիչ կորուստ առաջանա:

6. Լիցքից առաջ հալոցի մեջ բարբիտը պիտի խառնել յերկաթե դրալով կամ անագման ձողիկով, վորպեսզի լիցքը միատարր բաղադրության լինի։

7. Հալոցի միջից բարբիտը գդալով դուրս հանելիս պետք ե հեռացնել ածուխն ու խարսածը և հետեւ, վոր գդալի մեջ ածուխ կամ խոսքամ չընկնի:

8. Բարբիտն առանցքակալի մեջ լցնելիս հարկավոր և գդալը մոտ պահել սպասքին և լիցքի պրոցեսն արագ կտարել:

Այսպիսով լիցքի վորակը շատ լավ կլինի հալոցը բարձրից հոգին՝ նրա մեջ առաջանում են ողի պղպջակներ, վորոնք, հալոցը սառչելու միջոցին դուրս գալ չկարողանալով, մնում են պնդացած մետաղի մեջ։ Բացի այդ թթվուտացումը լինում է չափից ավելի:

9. Հարկավոր և հատկապես նկատի առնելի, վոր հալոցն առանցքակալին լանելիս անհրաժեշտ ե լիցքը կտարել առանց ընդմիջումի, հակառակ դեպքում առանցքակալին թափված բարբիտը սառչելով՝ նրա վրա լցրած նոր յեռուն բարբիտը հին բարբիտին չի կլչի, և յերկուսի միջն կար կտաշանա։ Բացի սրանից, կտաշանա բարձր թթվուտացում, վորը սովորաբար դյուրությամբ և առաջանում մեծ քանակությամբ հեշտությամբ թթվուտացող կապար պարունակող բարբիտի մեջ (բարբիտի բոնդրատ):

10. Լիցք արած առանցքակալն սպասքի մեջ պիտի մաս այնքան ժամանակ, վոր բավարար լինի պահանդը կամ առանցքակալը սառչելու և բարբիտը պնդանա:

Ծանրություն.—1. Բարբիտի պնդությունն ստուգում են փոքրիկ ձողի միջոցով։

2. ԱՏԶ և ԱՏԶ պահանդները սառչելու են մոտավորապես 4—5 ըոպեյի ընթացքում։

3. «ԳԱՅԶ» առանցքակալները սառչում են 2—3 ըոպեյի ընթացքում։

11. Այն դեպքերում, յերբ սպասքի գեր-տաքությունն անցնում է 175° C-ից, անհրաժեշտ է կամ դադար տալ, վորպեսզի սպասքը սառչի, կամ պնդաք և ջրով սառեցներ ճիշտ այդպես նաև այն դեպքում, յերբ սպասքի միջուկը ջերմաստիճանն ընկնում ե, անհրաժեշտ է զողիչ լամպով միջուկը տաքացնել։

Սովորաբար առանցքակալի լիցքը կտարազը շուտով հմտություն և ձեռք բերում և լիցքի ոպերացիաները կտարելուց յե առանց ընդմիջումի՝ այնպիս, վոր վոչ լրացուցիչ տաքացման և վոչ ել լրացուցիչ սառեցման պահանջ և առաջանում։

12. Անջատման ոպերացիան լիցքին զուգընթաց և կտարվում։

Այն գեղգում, յերբ վորեև պատճառով առանցքակալների անագում ուշանում ե, անհրաժեշտ է լիցքը կտարելուց առաջ անագմանը թարմացնել այնպիս, վոր ապահով լինենք, թե բարբիտի պահանդի մակերեսին անպայման կլպչի։

Անագով թարմացումը կատարվում է ճիշտ այնպես, ինչպես և անառումը, վորոշ տարբերությամբ, այսպես.

ա) առանցքակալը տաքացնում են մինչև $180^{\circ}C$ — մինչև յերեքյակի հալման ջերմաստիճանը.

բ) մաքուր աղբեստի խոզանակով պետք է սրբել-մաքրել առանցքակալի անջատված մակերեսը.

գ) անմիջապես յերեքյակը քսում են առանցքակալի ամբողջ մակերեսը՝ յերեքյակից պատրաստած ձողի միջոցով.

դ) վորպեսդի յերեքյակը հավասարաչափ քսված լինի առանցքակալի յերեսը, առանցքակալը կամ պահանդը շարժում են ձեռքի մեջ այնպես, վոր առանցքակալի ամբողջ մակերեսն անագի շերտով հավասարաչափ ծածկված լինի:

Արտածորում չպիտի տեղի ունենա.

ե) յերբ անագն արդեն տարածված կլինի առանցքակալի ամբողջ մակերեսով, անմիջապես առանցքակալն անոթի մեջ պիտի դնել և բարբիտն խոլոյն պիտի լցնել.

Անագումը նպատակահարմար ե կատարել լիցքին զուգընթաց:

13. Յերբ հալոցի մեջ յեղած բարբիտն $\frac{3}{4}$ -ն արդեն գործ ե ածված, անհրաժեշտ ե բարբիտն ավելացնել վերը մատնանշված նորմին հասցնել, այսինքն 4—6 կգ անել:

ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ԼԻՑՔԻ ՎՈՐԱԿԻ ՎԵՐՍԱԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ուշադիր վերաբերումնքի ե լիցքի վերաբերյալ մեր մատնանշած ցուցումները պահպանելու դեպքում, լիցքը կատարողը շուտով ձեռք ե բերում հարկ յեղած հմտությունն՝ առանցքակալների լավորակ լիցք կատարելու համար:

1. Առանցքակալի լիցքը կատարելու վրա վերահսկում ե ինչպես լիցքը կատարողը, այնպես և առաջինի հետ նաև արհեստանոցի բրակյորը-խոտանողը (վերահսկիչ կոնտրոլ):

2. Առանցքակալների լիցքի կատարման վերահսկողությունը տեղի յե ունենում հետևյալ յեղանակով.

ա) լիցք արած առանցքակալի մակերեսն ստուգում-դնում են Առանցքակալի մակերեսը հարթ-հավասար և անփայլ արծաթագույն պիտի լինի.

բ) լիցքի բեկվածքը մանր բյուրեղային պիտի լինի, բեկվածքում խոշոր բյուրեղներ չպիտի գտնվեն:

գ) հատուկ բռնիչի միջոցով պահված կամ մեջաեղից կախ տված առանցքակալն ստուգելիս (փորձելիս) առանցքակալին դարձած մուրճի հարվածից պիտի առաջանա մետաղի անդողոջ հնչյուն:

Դողդոջումն ու խուլ ձայնը նշան են, վոր բաբերիտի շերտն ամուր չի կպած պահանդին կամ առանցքակալալին, և այդպիսի առանցքակալները ճանաչվում են վորպես խոտանած առանցքակալներ.

դ) առանցքակալի մակերեսի վրա չպիտի լինեն նստվածքի կամ գաղացին խեցիներ (ռակօսիա), վոր հետագա մեխանիկական մշակման ժամանակ հեռանալ հնարավոր չե.

ե) հատկապես մեծ խնամքով պիտի ստուգել առանցքակալի կողին լիցքը, ճեղքվածքներ-խեցիներ, չցված տեղեր և կարեր առանցքակալի մակերեսին չպիտի լինեն:

ԱՌԱՆՑՔԱԿԱԼԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԼԻՑՔԻ ՀԵՏՈ

1. Լիցքը կատարելուց հետո առանցքակալի վրայից պիտի մաքրել նրա՝ հալոցքից մասցած ցցուկները:

2. Ցցուկները պետք ե վաչչացնել՝ տաքացած զողիչով կտրելով, կամ, ծայրահեղ դեպքում, խոշոր ատամ ունեցող մետաղի սղոցով:

Մանրուրյուն — 1. Ցցուկները պահանդների վրայից մետաղի սղոցով կտրելու դեպքում անհրաժեշտ ե ունենալ հատուկ հարմարանք՝ պահանդները մամլակի մեջ ամրացնելու համար, հակառակ դեպքում պահանդները կարող են վնասվել:

2. Վոչ մի դեպքում չի թույլատրվում պահանդները մամլակի մեջ դնել անմիջապես, վորովհետև դրանից պահանդները կարող են ձեռքիութել (գեֆորմացիա), բարբիտի կաչունությունը կիսախտվի, և կարող են առաջանալ սովորական աչքով աննկատելի, բայց խոշորացույցով նկատելի մանր ճեղքեր:

4. Վերը մատնանշված յեղանակներից վորեւ մեկով ցցուկները հետացնելուց հետո անհրաժեշտ ե կածաները կամ հատվածի մակերեսը տաքրիչով և կամ խարատել խարտոցով:

Ճիշտ նույն յեղանակով ել խարտոցով հարկավոր ե քերել-մաքրել կողերն ու ցցուկները:

4. Մորանքները հեռացնելուց հետո պիտի կատարել շաբթանակների և պահանդների յերկրորդ ստուգումը — ճայնի նկատմամբ:

5. Լիցքը կատարված և շաբթանակի վրա արդեն ստուգված պահանդները ջոկվում են, վորից հետո ստուգում են սալը, ապա տեղի յե ունենում դրոշմանշումը (մարկիրովիկան), վերը մատնանշված յեղանակով:

6. Պահանդները չպիտի խորասուղվեն շաբթանակի մեջ, նրանք պիտի շաբթանակի մակերեսից $0,5—0,15$ միլիմետր բարձր մնան և ամուր դաշն շաբթանակի զանգվածին:

7. Շարժանակի պահանդները պիտի ամուռը հազցված լինեն շարժանակի ներքին գլխի և նրա կափարչի մեջ և իրենց ամբողջ արտաքին մակերեսներով պիտի նպակն շարժանակին և նրա կափարչին:

Ծանոթաթյուն.—Նկատի առնելով այս, վոր առանցքակալների լիցքը բոնդրատ-բարեիտով դյուրազգաց և զարկերի նկատմամբ, և հարավոր ե, վոր զարկերից ձեղքերտության—պահանդի մշակումը պիտի կատարել մեծ դրուշությամբ:

8. Այս շարժանակները, վորոնք պահանդներ չունեն, նրանց հեղուների անցքերի մեջ լիցքի ժամանակ լցված բարեիտը մաքրում են հատուկ գայլիկոնով:

9. Բոնդրատ-բարեիտով լիցք արած պահանդներն ու շարժանակները պիտի դրոշմվեն Ե-ՄՔ մարկայով, իսկ Ե-83 բարեիտով լիցք արածները—Ե-83 մարկայով են դրոշմվելու:

10. Յուղատար անցքերը պետք ե ծակել միմիայն սուր գայլիկոնով, վորպեսզի բարեիտների հպակածքը պահանդին—անվաս մնա:

11. Առանցքակալները խորը, տաշեղի հաստ շերտով, չպիտի խարստել, վորովհետև այդ գեպօռմ բարեիտի շերտը կարող ե պոկվել։ Տաշեղի հաստությունը պիտի լինի 1—1,25 միլիմետր՝ առաջին—սկզբան խարատման համար, իսկ յերկրորդ՝ բոլորովին մաքրելու նպատակով խարատելու համար—0,25 մ.։

12. Յուղատար խորպակներ փորելն ընդունելի չպիտի համարել, վորովհետև այս դեպքում ել բարեիտի շերտը կարող ե պոկվել, մանավանդ այս դեպքում, յերբ գործիքը բռնի ե:

Ամենից լավ ե յուղատար փոսիկները ֆրեզել (գերծել) հատուք հարմարանքով կամ դադայահի միջոցով:

ԲԱՐԲԻՏԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Բարեիտի թափթփուկներն են (օտխօծել):

1. Ծորանքները:

ա) խարտվածքը—տաշեղները.

բ) հին առանցքակալներից հալտծ բարեիտը.

գ) բարեիտի հոսը (ծորանքները), կտորներն ու ցայտերը:

2. Հիմնական առանցքակալների լիցք կատարելու համար հալոցին կարելի յե ափելացնել հալոցի ամբողջ տարողության $30^{\circ}/_0$ -ի չափով բարեիտի թափթփուկներ, այսպես, հոս (ծորանք) $20^{\circ}/_0$, տաշեղ՝ $10^{\circ}/_0$:

Շարժանակային առանցքակալների լիցք կատարելիս հալոցին կարելի յե ափելացնել միայն ծորանքներ՝ հալոցի մեջ լցված բարեիտ՝ $10^{\circ}/_0$ -ի չափով միայն:

4. Բարեիտին խառնած խարատվածքը պիտի ուշագրությամբ հետազոտել և նետեն, վոր խարատվածքն իր մեջ չունենա կողմնակի խառնուրդ—մանը մետաղի փոշի, ինչպես նաև մետաղի կամ չուգունի խարատվածք:

Հին առանցքակալներից հալած բարեիտից պիտի ձուլել 4—5 կիլոգրամանոց կտորներ:

6. Հին, կաղապարված բարեիտը պիտի դրոշմել բոնդրատ-բարեիտի ՄՔ-3 մարկայով, Ե-83 բարեիտը՝ „Օ-3“ մարկայով: (Օ—նշանակում ե անագե բարեիտ):

7. Առանցքակալներից հալած և „Օ-3“ կամ „ՄՔ-3“ մարկաներով դրոշմանշած հին բարեիտը պահեստ պետք ե հանձնել:

8. ՄՔ-3 բարեիտի թափթփուկները (օտխօծել), վորոնք պիտանի չեն վերանորոգիչ արհեստանոցներում ոգտագործելու համար, հետզհետե հավաքվելով պիտի հանձննվեն բարեիտի գործարաններին—վերահամարն համար:

ԲԱՐԲԻՏԻ ՊԱՀՈԱՆՈՒՄՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

1. Բարեիտը սուր—դեֆիցիտային ապրանք ե—նրա պահպանությունն ինչպես պահեստում, այնպես և արհեստանոցում պիտի լինի խեստ վերահսկողության տակ այնպես, վոր բարեիտն անխնայորեն չծախսվի, չգողացվի և այլն:

Պահեստում բարեիտը պետք ե պահպի հատուկ արկղիկում, պահպանի մեջ, վորը փակի տակ պիտի լինի շարունակ:

3. Բարեիտը բաց ե թողնվում միմիայն վերանորոգիչ արհեստանոցի վարեկչի թույլտվությամբ, բացառապես վերանորոգման յենթակառակտորների առանցքակալների լիցքը կատարելու համար:

4. Բարեիտը կշռում են և բաց են թողնում միմիայն քաշով. հաշվի մեջ գրում են այն բանվորի անունը, վորը, պատվերի համարի համաձայն, պիտի կատարի լիցքը:

5. Յուղագանչյուր հերթափոխության կամ բանվորական որվավերջը կաղմանում ե բարեիտի գործածության որական համամետական հաշիվ—տեղեկանք. հաշվի մեջ ցույց պիտի տրվի՝

ա) հերթափոխության սկզբին առկա (յեղած, մնացած) բարեիտը՝ բարեիտի ձողեր, կամ կտորներ, վորոնց քաշը պետք ե նշանակել առանցքակալներից, վերահամար միջոցով, ստացված հին բարեիտի հոսվածքներ, խարատվածք.

բ) պիտի նշանակել պահեստից ստացված թարմ բարեիտի քաշը. նշանակել նաև որվա ընթացքում հին առանցքակալներից վերահամար միջոցով ստացված բարեիտի, ծորանքների ու խարատվածքի քաշը.

գ) պիտի ցույց առաջ առանցքակալների ու խարատվածքի քանակը (թե ինչ քանակությամբ լիցք ու խարատվածք ե կատարված), նշելով առանցքակալների տիպը (տեսակը).

դ) պիտի նշանակել հերթափոխության ընթացքում ծախսված բարեփակ քանակությունը՝ հետեւյալ կարգով. շարժանակների ու պահանդեների լիցքի վրա ծախսված թարմ բարեփակ քանակությունը, հաշվի առնելով նաև այրվածքը, ապա նաև բանեցրած թափվածքներն ըստ տեսակների.

ե) պետք ե հաշվել մեացորդ բարեփակ և համեմատել ծախսածի հետ՝ կազմելով որական հաշվեկշիռը:

6. Այս ձեր հաշիվը դյուքությամբ պահպանելու և կատարելու համար լիցքի ցեխում հետեւյալ կարգը պիտի սահմանել.

ա) թարմ բարեփակ պիտի պահել առանձին արկղի մեջ.

բ) հոսկածքներն առանձին արկղում:

գ) առանցքակալները մշակելու ժամանակ և զրա հետեւանքով ստացված խարատվածքը նույնպես պիտի պահպի առանձին արկղներում:

7. Բոնվրատ-բարեփակ ու նրա թափթփուկները Ե-83 բարեփակ և սրա թափվածքից առանձին պիտի պահել:

8. Վոչ մի դեպքում չպետք ե իրար խառնել Ե-83 և բոնվրատ-բարեփակ:

9. Բարեփակ տարբեր տեսակների հաշիվն ավելի լավ պահելու համար անհրաժեշտ ե բարեփակ և հոսկածքներ պարունակող արկղները գրոշմանշել այսպես.

ա) մաքուր բարեփակ Ե-83, Բ-ՄԿ

բ) հոսկածքներ Օ-2, Մ-2

գ) հին բարեփակ Օ-3, Մ-3

դ) խարատվածք Օ-Ը, Մ-Ը (Ը-նշանակում ե տաշանք):

10. Վորպեսզի Ե-83 և Բ-ՄԿ բարեփակներն աշխատանքի ընթացքում իրար չխառնվեն, նրանց հալումն ու լիցքը պիտի կատարել տարբեր հերթափոխությունների ժամանակ (յեթե աշխատանքը յերկու հերթով ե կատարվում), կամ առանձին որերին, յեթե աշխատանքը մի հերթափոխությամբ ե կատարվում:

ԼԻՑՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ

1. Հալման ու զոդիչ լամպերը պետք ե կանոնավորել ուղղել և միահյան յերկաթե թիթեղով պատաճ դազգյահի վրա, թույլ չտալով, վոր կերոսինը թափվի փայտե մասերին:

2. Զոդիչ լամպերը չափից ավելի չպիտի լարել, չպետք ե թույլ տալ նաև, վոր լամպերը շատ տաքանան:

3. Հալոցի մեջ բարեփակ պիտի դնել աքցանի միջոցով զգուշորեն, այնպես, վոր ցայտուկ չառաջանա:

4. Առանցքակալի լիցքը կատարելիս պիտի զգուշ լինել, վոր բարեփակ ցայտուկներ չընկնեն աշխատողների յերեսին կամ ձեռքերին, վոր կարող ե տեղի ունինալ հատկապես այն դեպքում, յերբ բարեփակ գեր-տաքացած ե:

5. Տաք առանցքակալները պետք ե բռնել միմիայն ըռնիչի միջոցով, հակառակ զեղպում կարող են մարմնի այրվածքներ առաջանալ:

6. Մաքուր ազաթթվությամբ հետ պետք ե զգուշությամբ վարվել և չթուզներ, վոր թափվի:

7. Կառաւատիկ սոլան, վորը գործադրվում է կեղտոտված առանցքակալները նախապես մաքրելու նպատակով լուծույթ ստանալու համար, պետք ե պահել առանձին, զգուշորեն վարվել նրա հետ՝ այրվածքներից խուսափելու համար:

8. Բարեփակ կորրատելիս պետք ե նախազդուշական միջոցներ ձեռք առնել, վոր բարեփակ մասնիկները չընկնեն աշխատողի մարմնի չպաշտպանված մասերի վրա:

9. Ձեռքով ստուգումներ կատարելիս հարկավոր ե խուսափել ջարդված կտորների սրածայր մասերից, վորպեսզի ձեռքը մվասվածք չստանա:

10. Առանցքակալներն անագիկիս անհրաժեշտ ե խոզանակը զեղք առաջ շարժել և վոչ գեպի իրեն, վորպեսզի աշխատողի յերեսին անագի ցայտուկ չթուչի:

11. Կապարե հալվածքները թունավոր են, այդ պատճառով և աշխատանքը զերջացնելուց հետո, ուտելուց առաջ ձեռքերը հարկավոր ե մաքուր լվանալ:

12. Լիցք կատարելու տեղում ողը պիտի լինի տառատ, մաքուր, թարմ. այդ պատճառով անհրաժեշտ ե լավ ոդափոխություն սահմանել:

13. Ցեթե հալոցի և կամ զոդիչ լամպերը հիսում են (մուր են տալիս), պետք ե զրա առաջն առնել և առա շարունակել աշխատանքը:

14. Ցեռքերն այրվածքից ու ցայտուկից ազատ պահելու համար պիտի թաթպաններ ունենալ:

Ծանօթուրյան.—Գործնականում հարկավոր ե միայն ձափ ձեռքին թաթպան ունենալ:

ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱԽՍՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐ

Առանձին ուղադրության են արժանի բարեփակ նորմաները: Բերում ենք այտեղ աղյուսակ և 7-ը, ինչպես Ե-83 բարեփակ, այսպես և Բ-ՄԿ բոնվրատ-բարեփակ նորմաները.

ԱՏԶ յել ԽՏԶ տրակտորներում մի զույգ պահանդիների համար գործադրվող Բ-83 բարիքի ֆանակը՝ գրամներով

Աղյուսակ № 7

Ա.թ	Բ.83 բ ա բ բ ի տ ի ծ ա խ ս ը	Քաշը
1.	Հին առանցքակալների հալոցք	320 գրամ
2.	Զարդելու հետևանքով առաջացած պակասորդ . . .	80 »
3.	Լիցքի համար գործադրվել կարող ե	240 »
4.	Առանցքակալի մեջ ե լցվում (հալվածքների և այլ բաների հետ միասին,)	856 »
5.	Կորուստ համան ժամանակ	59 »
6.	Հալվածքների քաշը և պահանդիների ու առանցքակալների խարատումից, յուղատար անցքերը գայլիկոներուց, յուղատար խուղակները ֆրեզերուց (գերծելուց) առաջացած տաշեղների քաշը . . .	416 »
7.	Կորուստ թափվածքը հալելուց	34 »
8.	Առանցքակալների միջին բարբիտի մաքուր քաշը . . .	440 »
9.	Բերիչով տաշվածքի համար թողած բարբիտ . . .	120 »
10.	Բարբիտի ընդհանուր ծախս	653 »
11.	Վերանորոգման նպատակով պահանջվող (նոր) բարբիտի քանակը	
	Ընդամենը մեկ կոմպլեկտի համար . .	1652 »

ԱՏԶ յել ԽՏԶ տրակտորներում մի զույգ պահանդիների համար գործադրվող Բ-ՄԿ բարիքի ֆանակը՝ գրամներով

Աղյուսակ № 8

Ա.թ	Բ-ՄԿ բ ա բ բ ի տ ի ծ ա խ ս ը	Քաշը
1.	Առանցքակալների մեջ են լցնում	1.040 գ
2.	Կորուստ շիթատայի խարամի և ցայտուկի համան ժամանակ	50 »
3.	Թափվածքների քաշը և պահանդիների ու առանցքակալների խարատումից, յուղատար անցքերը գայլիկոներուց, յուղատար փոսուկները ֆրեզերուց առաջացած տաշեղների քաշը	500 »
4.	Կորուստ խարատվածքի զաման ժամանակ բարբիտի քանակություն	50 »
5.	Մաքուր բարբիտի քանակությունն առանցքակալների մեջ	490 »
6.	Բարբիտի ընդհանուր ծախս	590 »
	Ընդամենը մի տրակտորի համար	2360 »

Առանցքակալների վերանորոգման համար գործադրվող այլ նյութերի ծախսը

Աղյուսակ № 9

Ա.թ	Նյութերի անուններն ու գործադրվող առարկաները	ԱՏԶ յել ԽՏԶ արական մի կոմայի առանձ էականին. համ.
1.	Ցերեքյակ, անագման համար	50 գրամ
2.	Ցիսկ, աղաթթվուտ՝ խածատիլու համար	3 »
3.	Աղաթթվուտ՝ անագման համար	15 »
4.	Փայտածուխ՝ հալոցքի ժամանակ կոմպոնենտներն այրվելուց պահպանելու համար	5 »
5.	Կերոսին	
6.	Ավոտ՝ առանցքակալները խարելու համար	

ԱՏԶ յել ԽՏԶ տրակտորների առանցքակալների վերանորոգման ժամանակի նորմաները

Աղյուսակ № 10

Ա.թ	Պահանջվող նորոգումը	Ժամանակի նորմա
1.	ԱՏԶ և ԽՏԶ տրակտորների մի կոմպլեկտ պահանդիները հին բարբիտը հալելուց հետո նորով լցնելը	1 ժ. 10 ր.
2.	ԱՏԶ և ԽՏԶ տրակտորների նոր առանցքակալների լիցքը	1 » 5 »
3.	ԱՏԶ և ԽՏԶ տրակտորների լիսեռի պահանդիների մի կոմպլեկտ խարատելը	1 » 30 »
4.	ԱՏԶ և ԽՏԶ տրակտորների առանցքակալների խարումը պատրաստելու համար սառցարանները սարքելու, յուղատար խուղակները ֆրեզերու, յուղատար անցքերը գայլիկոներու և կոմպլեկտավորումը միջադիրներով կարգավորելու համար	1 » 20 »
5.	ԱՏԶ և ԽՏԶ տրակտորների շարժիչի առանցքակալները խարաման գաղղահին տեղադրելն ու խարումը կատարելը	1 » 30 »

ԲԱՐԲԻՏԻ ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԸ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիթի ԿԱՏԱՐՈՂԸ կատարում և առանցքակալների հին բարբիտի հալոցքը պատրաստում և տարբեր սիստեմների (տեսակների) առանցքակալների լիցքը կատարելու սպասքները, շարժանակներն ու պահանդիները տեղափորում և սպասքի մեջ: Սարքավորում-տեղադրում և «Դագ»

ավտոմոբիլի հիմնական առանցքակալները լցնելու սպասքը բլոկի՝ իրանի վրա, կատարում ե հին բարբիտի և խարատվածքի վերահալոցքը, շիթը պատրաստում ե բարբիտը հալելու նպատակով։ Կատարում է առանցքակալների լիցքը և լիցքից հետո հավաքում ե լիցքի սպասքը։

Լիցքի կատարողը պիտի իմանա շարժիչների և վերանորոգման մեջնաների կոնսորտիկցիան (կառուցվածքը) և բարբիտի առանցքակալների աշխատանքի պայմանները։ Լիցքը կատարողը պիտի գիտենա ինչպես Ե-83 և Ե-ՄԿ (բոնդրատ) բարբիտների բաղադրությունը, այնպես և ուրիշ, վերանորոգման յենթակա մեքենաների համար գործադրվող բարբիտների բաղադրությունը։

Լիցքը կատարողը պիտի իմանա բարբիտների մեխանիկական և տեխնոլոգիական հատկությունները—պիտի գիտենա բարբիտի հալման և հալոցքը լցնելու ջերմաստիճանները։ Նա պիտի իմանա նաև առանցքակալների լիցքը կատարելու համար գործադրվող սպասքների կառուցվածքն ու այդ սպասքներով աշխատելու պայմանները, տեղյակ պիտի լինի բարբիտի հալոցքի ժամանակ սպասարկող զոդիչ լամպերին ու սրանց գործադրությանը։

Լիցքը կատարողը պիտի հասկանա բարբիտի սառեցման արագության ազդեցությունը լիցքի վորակի վրա, նա պիտի կարողանա կարգավորել բարբիտի տաքացման ջերմաստիճանը և ողտվել ջերմաստիճանը վորոշող սպասքներից, պիտի կարողանա վորոշել բարբիտի տեսկը, վորակն ու պիտանիությունը և սահմանել սպասքների կարգավորումը։ Վերջապես նա պիտի վորոշել կարողանա լիցքի վորակը։

Վարակավարման կարգը՝ 5:

ԽԱՐԱՍՈՂՆ սառվում ե լիցք արած առանցքակալները և ընդունում ե, հալվածքները հատում ե, թափվածքները հալում, կտրիչներն սպասքի մեջ ե դնում, առանցքակալները խարատումն ըստ լիսեռի, յուղատար անցքները գայլիկոնում և յուղատար խուղակները պատրաստում։

Խարատողը պիտի իմանա վերանորոգվող մեքենաների շարժիչների կոնսորտիկցիան և շարժիչների առանցքակալների աշխատանքի պայմանները։

Խարատողը պիտի գիտենա Ե-83 և Ե-ՄԿ (բոնդրատ) բարբիտների տարբերությունը և սրանց մեխանիկական հատկությունները։ Նա պիտի տեղյակ լինի միկրոմետրին և նրա գործադրությանը, ճանաչի առանցքակալները խարատելու սպասքները և սրանց գործածության ու նրանց հետ վարգելու յեղանակները։

Խարատողը պիտի կարողանա ճիշտ չափել լիսեռի վզիկները, պիտի կարողանա կարգավորել խարատման սպասքներն ըստ լիսեռների՝ հա-

մաձայն միկրոմետրի ցուցումների—ճիշտ աեղադրել կտրիչները և խարատվածքի վորակն ստուգել։

Վարակավարման կարգը՝ 5:

ԽԱՐԱՍՈՂՆ ԿԱՏԱՐՈՂԸ տեղադրում ե շարժիչը դազգյահի վրա և կատարում ե առանցքակալների խարումը, առանցքակալների մշակումը, լվանում ե շարժիչը խարումը կատարելուց հետո և դազգյահից հանում ե շարժիչը։

Նա պիտի գիտենա վերանորոգման յենթակա մեքենաների կոնսորտիկցիան և ծնկածել լիսեռի ու առանցքակալների աշխատանքի պայմանները, բարբիտի մեխանիկական և տեխնոլոգիական հատկություններն առանցքակալներում։

Խարումը կատարողը պիտի իմանա խարման դազգյահի կառուցվածքն ու նրա գործածության յեղանակները, ինչպես և դազգյահի խնամքի պայմանները։

Նա պիտի իմանա խարումը կատարելու կանոններն ու կատարելիք գործողությունների կարգը (հաջորդականությունը):

Պիտի կարողանա շարժիչը դազգյահին տեղադրել, գործի գցել դագդյահը, կարգավորել առանցքակալների ձգողությունը, խարումը կատարելու ժամանակ ապահովել խարման յենթակա առանցքակալների սառեցումը և իմանա շարժիչի լիսեռի աշխատանքի բոլոր պայմանները։

Վարակավարման կարգը՝ 3:

ԲԱԲԲԻՏՈՎ ԼՑՎԱԾ ԱՌԱՑՔԱԿԱԼՆԵՐԻ ՅԵՎ ԾՆԿԱԶԵՎ ԼԻՍԵՌՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ

Նորմալ կերպով աշխատող շարժիչի բարբիտով լցված առանցքակալի և ծնկածել լիսեռի արագ մաշվելու հիմնական պատճառներն են։

1. Առանցքակալները ժամանակին չձգելը։

2. Առանցքակալներն անկանոն ձգելը։

3. Շարժիչը կանոնավոր կերպով չյուղելը։


4. Յուղի վատ վորակը։

Այս խնդիրներն ավելի պարզելու համար յերկու առանձին տրակտորների միջոցով փորձեր են կատարված։ Այդ տրակտորներն աշխատել են միևնույն շրջանում, բայց դաշտային տարբեր բրիգադներում և տարբեր աստիճանի մասնագետ մեխանիկների հակողության տակ։ Դիտելով դիագրամը (նկ. 14) մենք տեսնում ենք, որ տրակտորներից մեկն աշխատել ե 540 ժամ, նրա ծնկածել լիսեռի վզիկներին (վորոնք միացած են շարժանակի ներքին գլխի հետ) ելիս և գոյացել ե

$M=1 \text{ m}: 0.01$

հանված միջնակիրի հաստ

ելիպս



այդ ելիպսի մեծությունն է 0,115 մմ: Մյուս արակտորի (վորն աշխատել և 359 ժամ) ծնկաձև լիսեռի վզիկների վրա գոյացած ելիպսի մեծությունը հավասար է 0,26 մմ, և վզիկը խարատելու, հղկելու պահանջ և առաջացել, չնայած վոր յերկու արակտորների առանցքականերն ել մտավորապես միաժամանակ են ձգվել ու կարգավորվել: Նկար 14-ի վրա պատկերված գիտարամը պարզ կերպով ցույց է տալիս, թե ինչպես են աճել յերկու արակտորների ծնկաձև լիսեռների ելիպսները լիսեռների վզիկների վրա. դիագրամը ցույց է տալիս նաև առանցքականները ձգելու ժամանակամիջոցը և հանված միջնադիրների միջին հաստությունը: Այս (Նկ. 14) գիտարամը կազմված է № 10 աղյուսակում բերած թվերի հիման վրա:


Բարբիտով լցված առանցքականների ավելի արագ մաշվելու և ծընկաձև լիսեռների վզիկների վրա ելիպս գոյանալու պատճառներն ստուգելիս պարզվում են կատարած փորձի շատ հետաքրքիր արդյունքները, վոր մենք տեսնում ենք հետեւյալ, նկ. 15-ի վրա. գիտարամը կառուցված է № 11 աղյուսակում բերած թվերի հիման վրա:

Սոսկվայի մարզում աշխատող Ա բրիգադի¹ 1934 թ. արտօնրած արակտորների ծնկաձև լիսեռների վզիկների մաշվածը—տրակտորները 1500 բանվորական ժամ աշխատելուց հետո—ըստ ԱԱ հարթության—հավասար են յեղել 0,77—0,84 մմ, ըստ Բ-Բ հարթության՝ 0,57—0,68 մմ, այն ժամանակ, յերբ ելիպսը հավասար է յեղել 0,17—0,20 մմ.

Երիգագի արակտորների մի քանի լիսեռներն ել—տրակտորը 1000 ժամ աշխատելուց հետո,—ցույց են տվել մաքսիմում մաշվածը՝ 0,57 մմ այն ժամանակ, յերբ ելիպսի մեծությունը հավասար է յեղել 0,205 մմ: Համեմատության համար ոգտվենք 1933 թվին արտադրված արակտորների միջոցով կատարված փորձերի ավյալներով: Վերցնենք յերկու լիսեռ, վորոնք բնորոշ են իրենց մաշվելու և խարատվելու-հղկվելու տեսակետից: Փորձարկված արակտորներից մեկի լիսեռը 1933 թվին յերկու անգամ ե խարատվել ու հղկվել—առաջին անգամին՝ 620 բանվորական ժամ աշխատելուց հետո, յերկրորդ անգամին՝ 542 բանվորական ժամ աշխատելուց հետո: Նույն արակտորի լիսեռը 1934 թվին նույնպես յերկու անգամ ե խարատվել, հղկվել—առաջին անգամին՝ 337 ժամ աշխատելուց հետո, յերկրորդ անգամին՝ 357 ժամ աշխատելուց հետո, ամեն անգամին ելիպսի մեծությունը հավասար է յեղել 0,205—0,225 մմ: Մյուս լիսեռը 1933 թ. խարատվել-հղկվել ե՝ արակտորը 817 ժամ աշխատելուց հետո: Յերկրորդ անգամ խարատվել-հղկվել ե՝ 624 ժամ աշխատելուց հետո:

Յերկրորդ անգամ խարատվելուց հետո այդ լիսեռն աշխատում է 1034 բանվորական ժամ, վորից հետո խարատվում-հղկվում ե, յերբ վզիկի ելիպսի մեծությունը հասնում է 0,20 մմ:

Նկանք մետր է բարձրությունը պահանջանառ պահանջանառ պահանջանառ



Տաշվածք և Ելիսոս Ռ-Խ: 0,01/օժ.

Առաջացած մաշվածքների և ելիպսների մեծությունը բացատրվում է առանցքակալների ձգման վորակի և մեխանիկի կողմից ցույց տըրքած տեխնիկական սպասարկման վորակի տարբերության հետեանքով։ Այն արակտորը, վորի լիսեռը 1934 թվին յերկու անգամ և խարսավել—սպասարկվել և ավելի ցածրորակ մեխանիկի կողմից և վորոշ ժամանակ աշխատել և ավտոլ 10 յուղով, վորը ստանդարտով չի նախատեսված տրակտորների աշխատանքի համար։ Փորձարկված տրակտորները 1933 թ. աշխատել են վորոնեժի մարզում, իսկ 1934 թ. Մոսկվայի մարզում։ Վերոհիշյալ տրակտորներով կատարված փորձերի արդյունքները ցույց են տալիս, վոր 1934 թվին լիսեռի վզիկները խարսավել են միջին հաշվով ամեն 600 ժամ աշխատելուց հետո։ Լիսեռների ավելի յերկար աշխատելը (1934 թվին) բացարկում և գործածվող յուղի բարձր վորակով, տրակտորների ավելի նորմալ բեռնվածությամբ, տրակտորի համեմատաբար ավելի բարձր պատրաստականությամբ, նրանց ավելի ուշադիր վերաբերմունքով դեպի մեքենաները և վերջապես դեպի տրակտորները ցուցաբերած ավելի վորակավորված մեխանիկների տեխնիկական սպասարկումով, վորոնք (մեխանիկները) հճուտ կերպով յուրացընել են առանցքակալները ձգելու և հատկապես բարբետը ուղիղականացնելու յեղանակը։

Հետևելով 1934 թվին 1500 բանվորական ժամ աշխատած տրակտորի ծնկաձև լիսեռի վզիկների մաշվածքը և ելիպսը պատկերող կորագծին (նկ. 15), մենք տեսնում ենք՝ դիագրամի վրա կորագիծը ցույց և տալիս, վոր լիսեռը 1000 ժամ աշխատելուց հետո, սինչև 1500 ժամ աշխատանքը լրացնելու ընթացքում, նրա վզիկների ելիպսի աճումը շատ դաշտակ և գնում, այսինքն՝ վզիկները մաշվում են մոտավորապես ըստ շրջագծի—միահավասար։

ԲԱՐԲԻՏԻ ՀԱՍՏ ՇԵՐՏՈՎ ԼԻՑՔ ԱՐԱԾ ՊԱՀԱՆԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Վորպեսզի վորոշվի, թե պահանդի լիցքը բարբետի ինչ հաստության շերտով պիտի կատարել և թե լիսեռի վզիկի տրամագիծն ինչ չափով թույլատրելի յէ փոքրացնել, կատարված և հետևյալ փորձը, լիսեռի վզիկը խարսած են մինչև 65 մմ այն ժամանակ, յերբ նորմալ վզիկի տրամագիծը 73 մմ և, Խարսածելուց հետո լիսեռն աշխատում է 330 ժամ և տալիս և մաշվածք 0,36 մմ, ելիպսը — 0,15 մմ։ Լիսեռի աշխատանքը կայուն ե, մաշվածքները շատ քիչ են տարբերվում նորմալ տրամագծով աշխատող վզիկի մաշվածքներից։

Ավելի փոքրացած տրամագծով լիսեռների աշխատանքի պայմանների հնարավորությունները փորձերի միջոցով չեն ստուգված, բայց պետք ե հաշվի առնել այն հանգամանքը, վոր ավելի բարակ լիսեռներն ավելի զգալի ծոռւմ են տալիս, վորի հետևանքն ել լինում ե այն, վոր բարբիտի առանցքակալները շատ արագ մաշվում են:

Այդ պատճառով ել կարիք ե առաջանում հաճախակի ձգել առանցքակալները: Վերջին նկատառությունը յելներով՝ չի թույլատրվում լիսեռների վզիկների տրամագիծը 65 մմ-ից ավելի փոքրացնել:

Վզիկը 65 մմ տրամագիծ ունենալու դեպքում առանցքակալների նորմալ պահանդներում բարբիտի լիցքի շերտը շատ հասում է լինում: Բարբիտի հասա շերտով աշխատող պահանդները շատ շուտ մաշվում են, դրա համար ել 65 մմ տրամագիծ ունեցող վզիկների համար սովորական պահանդները պետք ե փոխարինել վերանորոգման հատուկ չափերի պահանդներով:

Փորձերի արդյունքները հնարավորություն են տալիս յեզրակացնելու հետևալը.

1. Ե-ՄՀ բարբիտի լիցք արած պահանդներով առանցքակալները պետք ե ձգել ամեն 100—120 բանվորական ժամ աշխատանքից հետո, իսկ Ե-83 բարբիտով աշխատող առանցքակալները—պետք ե ձգել ամեն 120—130 բանվորական ժամ աշխատանքից հետո:

2. Լիսեռների վզիկների վրա 0,20 մմ ելիսու գոյանալու դեպքում առաջանում ե զգալի թիւկոց և պահանջվում ե առանցքակալների հաճախակի ձգում, վորի հետևանքով վզիկների խարտում-հղկումն անհրաժեշտություն ե դառնում:

Լիսեռների վզիկները խարտելիս-հղկելիս (յեթե այդ աշխատանքը հատուկ գազգյանի վրա յե կատարվում) խարատվող մետաղի հաստությունն ըստ ելիսու փոքր տրամագիծի—պետք ե լինի մոտավորապես 0,30 մմ: Վերոհիշյալ պայմաններում, 1934 թվին, տրակտորը 1200 բանվորական ժամ աշխատելուց հետո, նրա լիսեռի վզիկի մաշվածը մեծությունը հավասար ե 0,76 մմ, ելիսու համանում եր 0,20 մմ:

Այս մեծությանն ավելացնելով ամեն անգամ խարատելու-հղկելու հետևանքով հանվող մետաղի շերտի հաստությունը—լիսեռի վզիկի տրամագիծի փոքրացումը—վզիկը յուրաքանչյուր անգամին խարատելուց հետո հավասարվում ե 1,1 մմ:

1933 թ. արտադրված տրակտորի վերոհիշյալ աշխատանքների պայմաններում, տրակտորի 600 բանվորական ժամվա աշխատանքից հետո, լիսեռի վզիկի մաշվածը հասնում ե 0,60 մմ, իսկ ելիսու մեծությունը՝ 0,21 մմ. Արանց վրա ավելացնելով հանվող մետաղի շերտի հաստության մեծությունը, ամեն անգամ վզիկը խարատելուց հետո, նրա (վզիկի) տրամագիծը փոքրանում ե 0,9 մմ:

Յենելով այս տվյալներից՝ յեզրակացնում ենք, վոր տրակտորը յուրաքանչյուր 800—1000 բանվորական ժամ աշխատելուց հետո՝ վզիկները պիտի խարատվեն:

3. Մնկաձև լիսեռի վզիկի տրամագիծը 65 մմ-ից ավելի պակաս լինելու դեպքում լիսեռն աշխատեցնելը տեխնիկական հետակետից անթույլատրելի յե համարվում: 65—68 մմ տրամագիծը ունեցող վզիկների համար անպայման պետք ե գործադրել հատուկ վերանորոգման չափսեր ունեցող, հաստացրած պատերով պահանդներ:

4. Այս պայմաններից յելնելով, ոգտվելով 1933, 1934 և 1935 թվականներին կատարված փորձերի արդյունքներից, յեզրակացնում ենք, վոր ծնկաձև լիսեռի աշխատելու (պիտանի լինելու) ժամանակաշրջանը հավասար ե միջին թվով 8000 բանվորական ժամի:

5. Բարբիտի առանցքակալների ուսցիունալ աշխատանքների համար պահանջվում ե, վոր տրակտորի շարժիչն ամեն 10 ժամվա աշխատանքից հետո շարժիչի պատենատուփի ստորին վայրեցի ծորակը բացվել պատենատուփի միջի բանաշխատ յուղը մինչև ծորակը դատարկվել և նոր թարմ յուղ (ավտոլ) ավելացվել, յուղի բարձրությունը հասցնելով մինչեւ վերջին ստուգիչ ծորակը:

6. Տրակտորի ամեն 50 բանվորական ժամ աշխատանքից հետո հարկավոր ե տրակտորի պատենատուփի միջից բոլորովին դատարկել բանաշխատ յուղը և թարմ ավտոլ լցնել, ձմեռը Լ մարկայի, ամառ՝ T, իսկ գարնանն ու աշնանը՝ M մարկայի:

Աղյուսակ № 11

Ժբականություն	Ա ճ ո ղ ժամեր	Առանցքակալների վզիկի չին անգամ ձգելուց հետո նրանց աշխատանքամեջ մեծությունը քան.	Հանած միջնադրությունը հաստությունը՝ մմ-ներով	Մնկաձև լիսեռի աշխատանքը՝ թյունը՝ մմ-ներով	Ելիսու մեծությունը՝ մմ-ներով
550 ժամ աշխատանքամեջ տրակտորը	99	99	0,20	100	0,03
	229	130	0,18	208	0,05
	333	104	0,16	300	0,075
	435	102	0,21	540	0,115
359 ժամ աշխատանքամեջ տրակտորը	93	93	0,14	240	0,09
	213	120	0,09	359	0,25
	326	113	0,63	—	—

Տրամադրություն	Բանվորական ժամկերի քանակը	Վաղեկի հաբ- թությունը	Մաշվածքի մեծությունը	Ելիումի մեծությունը մմ-ներով
Ա բրիգադի արականություն	130	A-A B-B	0,05 0,015	0,035
	223	A-A B-B	0,125 0,04	0,085
	465	A-A B-B	0,26 0,12	0,14
	736	A-A B-B	0,32 0,18	0,14
	1232	A-A B-B	0,61 0,41	0,195
	1500	A-A B-B	0,77 0,57	0,20
	1535	A-A B-B	0,835 0,675	0,165
	513	A-A B-B	0,205 0,095	0
Ե բրիգադի արականություն	2013	A-A B-B	0,57 0,365	0,205



213

26.343

ԳԻՆԸ Յ ՌՈՒԲ.

На армянском языке
БАББИТЫ
и способы их применения



АРМЕНГИЗ - ЕРЕВАН